Հավելված 12 /կոդ ՔԲ/Կ-01-11/

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ է
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ խորհրդի
«--------» ---------- 2022թ.
թիվ -------- որոշմամբ

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի վճարային քարտ(եր)ի թողարկման և սպասարկման համար բանկային հաշիվների բացման հիմնական (ընդհանուր) կանոններ

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի վճարային քարտ(եր)ի թողարկման և սպասարկման համար բանկային հաշիվների բացման հիմնական (ընդհանուր) կանոններ

Խմբագրություն 3

ԲԱԺԻՆ 1. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1 Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, սույն կանոններում օգտագործվող տերմիններն ու սահմանումներն ունեն հետևյալ նշանակությունը.

«Բանկ» - «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ:

«Քարտ կամ վճարային քարտ» - ArCa, ABB լոկալ,ինչպես նաև Visa և MasterCard միջազգային վճարահաշվարկային համակարգերի վճարային քարտեր, որոնք հանդիսանում են Բանկի սեփականությունը և տրամադրվում են Քարտապաններին, Բանկի կողմից սահմանած գործարքներ կատարելու համար: Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, ապա Հիմնական և Կցված քարտերը միասին:

«Կանոններ» - Բանկի վճարային քարտ(եր)ի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի բացման սույն հիմնական (ընդհանուր) կանոնները, որոնք բոլոր քարտապանների համար համարվում են հրապարակային ստանդարտ ձև և սահմանում են Բանկի և քարտապանների միջև կնքված միանալու հրապարակային պայմանագրի հիմնական (ընդհանուր) պայմանները և կարգավորում են վճարային քարտ(եր)ի թողարկման, սպասարկման և բանկային հաշվի բացման հետ կապված կողմերի միջև ծագած հարաբերությունները (ներառյալ պայմանագրային):

«Քարտապան» - ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը ամբողջությամբ միացել է սույն Կանոններին՝ ընդունելով Բանկի հայտարարած (հրապարակած) վճարային քարտ(եր)ի թողարկման, սպասարկման և բանկային հաշվի բացման պայմաններն ու սակագները:

«Կողմեր» - Բանկը և Քարտապանը միասին:

«Հաշվի պայմանագիր (Պայմանագիր)» - Քարտապանի կողմից սույն Կանոններին միանալու միջոցով Բանկի հետ կնքված հրապարակային պայմանագիր, որի համաձայն Բանկը պարտավորվում է Քարտապանի համար վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բացել բանկային հաշիվ(ներ) և այդ հաշիվներով իրականացնել օրենքով, իրավական այլ ակտերով, սույն Կանոններով նախատեսված գործառնությունները:

«Հիմնական քարտ» - Բանկի կողմից թողարկված և Բանկի սեփականությունը հանդիսացող՝ ABB լոկալ, ArCa, MasterCard և Visa International վճարահաշվարկային համակարգերի նույնականացված դեբետային, հաշվարկային կամ վարկային (կրեդիտային) վճարային քարտ, որը թույլ է տալիս Քարտապանին՝ Հաշվի և վարկային պայմանագրերի հիման վրա կատարել վճարային քարտում առկա դրամական միջոցների կանխիկացում և(կամ) անկանխիկ գործառնություններ:

«Կցված քարտ» - նույն հաշվի ներքո Հիմնական քարտին կցված դեբետային, կամ հաշվարկային վճարային կամ վարկային (կրեդիտային)քարտ, որը կարող է լինել ինչպես Քարտապանի, այնպես էլ երրորդ անձի անունով, որով գործառույթներն իրականացվում են Քարտապանի կամ երրորդ անձ քարտապանի կողմից, ընդ որում այդ գործարքների հետ կապված ամբողջ պատասխանատվությունը և պարտավորությունները կրում է պայմանագիր կնքած Քարտապանը:

«Դեբետային քարտ» - նախատեսված է Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ Քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների հաշվին:

«Հաշվարկային քարտ» - նախատեսված է Քարտապանին պատկանող դրամական միջոցների սահմաններում գործառնություններ իրականացնելու համար՝ Քարտապանի բանկային հաշվում առկա դրամական միջոցների և Բանկի կողմից Քարտապանին տրամադրված վարկային պայմանագրի պայմանների համաձայն տրամադրված վարկի (օվերդրաֆտի) հաշվին:

«Վարկային (կրեդիտային) քարտ»-նախատեսված է Քարտապանի կողմից գործառնություններ իրականացնելու համար՝ Կողմերի միջև առանձին ձևով կնքված վարկային (կրեդիտավորման) պայմանագրի (համաձայնագրի) պայմանների՝ համաձայն Բանկի կողմից Քարտապանին տրամադրված վարկային միջոցների հաշվին:

«Դիմում-պայմանագիր(Դիմում)» Բանկի հրապարակած պայմաններով Քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշիվների բացման հիմնական (ընդհանուր) կանոններին միանալու օֆերտան Քարտապանի կողմից ակցեպտավորելու մասին թղթային կամ էլեկտրոնային դիմում, որը ներկայացվել է Քարտապանի կողմից Բանկի սահմանած (որոշած) ձևով և ներկայացվել է Բանկ՝ Հաշվի պայմանագիր կնքելու նպատակով:

«Քարտային Հաշիվ կամ Հաշիվ» - Հաշվի պայմանագրի հիման վրա Քարտապանի անվամբ բացված բանկային հաշիվ, որը բացվել է Դիմում-պայմանագրի հիման վրա, և որով Բանկը պարտավորվել է սույն Կանոններին համապատասխան Քարտապանին տրամադրել Քարտ, որը թույլ է տալիս Քարտապանին կատարելու Քարտում առկա միջոցների կանխիկացում և (կամ) անկանխիկ գործառնություններ և որով հաշվառվում են գործարքները և դրանց հետ կապված բոլոր գործառնությունները:

«Քարտի և քարտային հաշվի փակման դիմում» - Բանկի կողմից սահմանված ձևով դիմում, որը Բանկի աշխատակցի կողմից լրացվում, իսկ Քարտապանի կողմից ստորագրվում է քարտի և քարտային հաշվի փակման և Պայմանագրի լուծման նպատակով:

«Սպասարկող ստորաբաժանում կամ Ստորաբաժանում» - Բանկի ստորաբաժանում (այդ թվում՝ Բանկի մասնաճյուղ) , որտեղ կարող են ներկայացվել Քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, և որում կատարվում է հաշվի սպասարկումը:

«Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգեր (**Հեռակառավարման համակարգեր**)» – «Ինտերնետ-բանկինգ» և «Մոբայլ-բանկինգ» ծառայությունների մատուցման հեռակառավարման համակարգեր, որոնց միջոցով էլեկտրոնային փաստաթղթերի և հատուկ տեխնիկական միջոցների (սերտիֆիկատներ, բանալիներ և այլն) կիրառմամբ Բանկը Քարտապանին մատուցում է ծառայություններ, ինչպես նաև այն բոլոր ծրագրային ապահովումները կամ ծրագրային ապահովմամբ սարքավորումները, որոնց միջոցով առանց Բանկի աշխատակցի միջամտության Քարտապանին կարող են մատուցվել ծառայություններ:

«Սակագներ» - ֆիզիկական, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար Քարտի թողարկման և Հաշվի սպասարկման Բանկի սահմանած սակագները, որոնք նախատեսում են Քարտի թողարկման և սպասարկման, Հաշվի բացման և սպասարկման, Քարտով և Հաշվով գործառնություններ կատարելու և Պայմանագրի կատարման ընթացքում այլ գործողությունների իրականացման համար Քարտապանից գանձվող վճարների չափերը, Հաշվում պահվող դրամական միջոցների նվազագույն չափերը, Հաշվում առկա դրամական մնացորդի դիմաց հաշվեգրվող տարեկան տոկոսադրույքի չափերը, ինչպես նաև Հաշվի սպասարկման և վարման, Հաշվով հաշվարկների (փոխանցումների) իրականացման հետ կապված Բանկի ծառայությունների դիմաց այլ սակագները (նաև ժամանակ առ ժամանակ փոփոխվող սակագները/(վճարները):

«Քաղվածք» - Բանկի կողմից պատրաստված Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ քաղվածք, որում նշվում են տվյալ օրվա դրությամբ Հաշվի հետ կապված Քարտապանի կատարած գործարքները, Բանկի գանձումները, միջնորդավճարները և Բանկի նկատմամբ ունեցած դրամական (վճարային) պարտավորություններով (առկայության դեպքում) հաշվանցումները:

«Գործարք» - Քարտի ուղղակի կամ անուղղակի օգտագործմամբ՝ Քարտով ցանկացած գործառնության կատարում, այդ թվում ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումներ/հետվերադարձ, կանխիկի ստացման/մուտքագրման գործարքներ և այլն:

«Վճարային սահմանաչափ» - Քարտապանի քարտային հաշվին առկա միջոցների և Բանկի կողմից տրամադրված վարկային գծի/օվերդրաֆտի հանրագումար, որի շրջանակներում Քարտապանը կարող է իրականացնել Քարտով գործարք:

«Կանխիկացման սահմանաչափ» - Քարտից բանկոմատով կանխիկ գործառնություններ կատարելու սահմանաչափ /յուրաքանչյուր քարտատեսակի գծով սահմանված է Սակագներում և կարող է փոփոխվել Քարտապանի գրավոր դիմումի համաձայն:

«Առանց շփման (contactless) կատարված և Քարտապանի նույնականացումը չպահանջող գործարքներ» - Բանկի կողմից սահմանված գումարային սահմանաչափը չգերազանցող Քարտով կատարված օնլայն կամ օֆլայն գործարքներ, որոնց կատարման ժամանակ Քարտապանը չի նույնականացվում:

«Անհատական նույնականացման համար (ՊԻՆ-կոդ /PIN/)» - Բանկի կողմից տրամադրված Քարտապանին նույնականացնող ծածկագիր, որը կիրառվում է Քարտապանի կողմից քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված դեպքերում և անհրաժեշտ է Քարտով գործարքներ կատարելու համար:

OTP/One time password/» - Քարտապանի հեռախոսահամարին ուղարկվող մեկանգամյա օգտագործման ծածկագիր.

«CVV կամ CVC» - Քարտի դարձերեսին նշված եռանիշ թիվ և Քարտապանին նույնականացնող կոդ, որը կիրառվում է Քարտապանի կողմից վիրտուալ (ինտերնետ) միջավայրում գործարքներ կատարելիս:

«Հավաստագրում (ավտորիզացիա)» - Բանկի կամ համապատասխան Վճարային համակարգի համապատասխան լիազորված մարմնի թույլտվություն՝ Գործարքի կատարման համար:

«POS/ ՊՈՍ-տերմինալ» - քարտի ընթերցման հնարավորությամբ զինված էլեկտրոնային սարք, որը նախատեսված է առևտրի և (կամ) սպասարկման կետում Քարտով անկանխիկ գործառնություն կատարելու կամ Բանկի և (կամ) վերջինիս սպասարկող ստորաբաժանման տարածքում Քարտով կանխիկացման գործառնություն կատարելու համար:

«Բանկոմատ/ ավտոմատ գանձման մեքենա (ԱԳՄ)» - գրասենյակային կամ արտաքին օգտագործման համար նախատեսված ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ ինքանսպասարկող էլեկտրոնային տեխնիկական սարք:

«Չնվազող մնացորդ» - Բանկի սակագներով սահմանվող Քարտային հաշվի մնացորդ, որի օգտագործման վրա դրված է սահմանափակում:

«Վարկային գիծ/ օվերդրաֆտ» Բանկի կողմից սահմանված վարկավորման կանոններին և վարկավորման պայմաններին համապատասխան, Քարտապանի հետ առանձին կնքված վարկային համաձայնագրի (պայմանագրի) պայմանների համաձայն Քարտային հաշվով տրամադրվող դրամական միջոցներ(վարկ):

«Stop-list» - միջազգային վճարահաշվարկային համակարգերի կողմից վարվող ցուցակ, որում ներառված վճարային քարտերով արգելվում են առանց առցանց հավաստագրման կատարվող գործարքները:

«Բանկային գաղտնաբառ»-Քարտապանի անձը նույնականացնող ծածկագիր, որը գեներացվում և տրամադրվում է Քարտապանին Բանկի կողմից սահմանված կարգով և կիրառվում է Քարտապանի մասին բանկային գաղտնիք համարվող տեղեկություններն իրեն տրամադրելու համար:

«Գերածախս» - Քարտապանի կողմից Գործարքների իրականացման, ինչպես նաև Բանկի կողմից Քարտի և վարկի սպասարկման հետ կապված վճարների գանձման արդյունքում վճարային սահմանաչափից ավել ծախսված գումար և դրա նկատմամբ հաշվարկված տույժ և տուգանք, որը ենթակա է մարման Քարտապանի կողմից: Դեբետային քարտերի դեպքում գերածախսը կարող է առաջանալ արտարժույթի փոխանակման, օֆլայն հաստատված գործարքների, սպասարկման վճարի գանձման արդյունքում և այլ դեպքերում:

«Փոխհաշվարկային փաստաթղթեր» - թղթային կամ էլեկտրոնային փաստաթղթերը, որոնք հիմք են հանդիսանում (ծառայում) Քարտի կամ նրա վավերապայմանների (ռեկվիզիտների) կիրառմամբ (օգտագործմամբ) իրականացված Գործարքների դիմաց Հաշվի դեբետագրման կամ կրեդիտագրման համար:

«Քարտի կասեցում (բլոկավորում)» - Քարտի առցանց /օնլայն/ հավաստագրման դադարեցում/արգելափակում:

«Հաշվետու ժամանակաշրջան» - գործառնությունների ժամանակաշրջան, որի վերաբերյալ Բանկը Քարտապանին ներկայացնում է Քաղվածք:

«Հավելվածներ» - Հաշիվներով գործառնությունների կատարումը կարգավորող գրավոր եղանակով ստեղծված ու հրապարակված ցանկացած փաստաթուղթ, Կողմերի միջև առանձին ձևով կնքված համաձայնագրեր (պայմանագրեր), ներառյալ Դիմում-պայմանագիր, դիմումներ, Բանկի կողմից միակողմանիորեն սահմանած պայմաններ ու առանձնահատկություններ:

«Կենտրոնական բանկ» - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:

«Գործառնական օր»- Քարտի սպասարկման հետ կապված գործառնություններ կատարելու ժամանակահատված, որը սահմանվում է աշխատանքային երկուշաբթիից-ուրբաթ ժամը 9:15–16:45՝ առանց ընդմիջման, և որը կարող է Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ հրապարակվելով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի պաշտոնական ինտերնետային կայքում.

«Ինտերնետային կայք»- Բանկի պաշտոնական www.amiobank.am ինտերնետային կայքը:

1.2 Սույն Կանոնները և Սակագները (ինչպես նաև այլ Հավելվածները), ներառյալ՝ փոփոխությունները հրապարակվում են Ինտերնետային կայքի հետևյալ հղումով բացվող ենթաէջում http://www.amiobank.am/am/page/Plastic-cards:

1.3 Սույն Կանոններով սահմանված Հաշվի պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը, այսինքն Հաշվի պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության նյութական օրենքներով, իսկ այն բոլոր հարաբերությունները կամ հարցերը, որոնք կարգավորված չեն, կարգավորվում և լուծվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, ապա՝

ա) բաժինների անվանումները օգտագործվում են միայն վկայակոչման նպատակով և չեն սահմանափակում կամ ներգործում նրանց նշանակության վրա.

բ) եզակի թվով սահմանված տերմինները (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը.

գ) որևէ բաժնին, կողմին կամ հավելվածին որևէ հղում համարվում է հղում սույն Կանոնների տվյալ բաժնին կամ կողմին կամ հավելվածին.

դ) ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին կամ նրա իրավահաջորդին.

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2.1 Սույն Կանոնները սահմանում են Հաշվի պայմանագրի հիման վրա Քարտի թողարկման և սպասարկման, Հաշվի բացման և վարման (սպասարկման) ստանդարտ պայմաններն ու կարգն, ինչպես նաև կարգավորում են դրանց հետ կապված Կողմերի միջև ծագած հարաբերությունները:

2.2 Կանոնները բոլոր Քարտապանների համար համարվում են հրապարակային ստանդարտ ձև և սահմանում են Բանկի և Քարտապանի միջև կնքված հիմնական (ընդհանուր) պայմաններին միանալու հրապարակային Հաշվի Պայմանագրի:

Պայմանագիրը կնքվում է քաղաքացիական օրենսգրքի 444 հոդվածին համապատասխան Քարտապանի կողմից Բանկի հայտարարած (հրապարակված) սույն Կանոններին ամբողջությամբ միանալու միջոցով և իրականացվում է Բանկի օֆերտան (Ինտերնետային կայքում հրապարակված Քարտերի թողարկման և սպասարկման համար հաշվի բացման հիմնական պայմաններն ընդունելու առաջարկը) Քարտապանի կողմից ակցեպտավորելու (Բանկի սահմանած օրինակելի ձևով կազմված և Քարտապանի կողմից ստորագրված թղթային և էլեկտրոնային դիմումը կամ իրավաբանական անձ Քարտապանի գործադիր մարմնի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված անձի (անձանց) կողմից, ստորագրված և կնիքված (առկայության դեպքում) դիմումը Բանկին ներկայացնելու) միջոցով: Պայմանագրի կնքման ամսաթիվ է համարվում Բանկի կողմից Հաշիվ բացելու մասին նշագրման ամսաթիվը:

Պայմանագրի կնքման փաստի հաստատման նպատակով Քարտապանին կարող է տրվել Հաշվի բացման մասին հաղորդագրություն:

2.2.1 Կանոններին միանալու Դիմում-պայմանագրի օրինակելի ձևերը սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն: Բանկի կողմից Կանոններին միանալու Դիմումի օրինակելի ձևում փոփոխությունների կատարումը չի համարվում Բանկի կողմից Պայմանագրի պայմանների միակողմանի փոփոխություններ: Կանոններին միանալու դիմումի օրինակելի ձևը Պայմանագիր կնքելու մտադրություն ունեցող Քարտապաններին տրամադրվում է սույն Կանոնների 2.16 կետով նախատեսված կարգով հրապարակելու միջոցով:

2.2.2 Այն դեպքում, երբ Քարտապանը Կանոններին միանալու դիմումով խնդրել է Բանկին բացել մի քանի Հաշիվներ, ապա Կանոններին միանալու այդպիսի դիմումը Կողմերի կողմից ճանաչվում է մի քանի Պայմանագրեր (Կանոններին միանալու դիմում նշված Հաշիվների քանակով) կնքելու մի քանի օֆերտա պարունակող Կանոններին միանալու դիմում: Այդպիսի օֆերտայի Բանկի ակցեպտը համարվում է Կանոններին միանալու դիմումում նշված Հաշիվների քանակով Պայմանագրեր կնքելու ակցեպտ:

Քարտապանի հետ միաժամանակյա գործող Պայմանագրերի քանակը չի սահմանափակվում:

Եթե Դիմում-պայմանագրում նշված են Հաշվով սահմանափակ գործառնությունների իրականացում, ապա կարող են իրականացվել բացառապես այն գործառնությունները, որոնք նշված են Դիմում-պայմանագրում:

2.3 Քարտապանի Հաշվով սպասարկումն իրականացվում է համաձայն ՀՀ գործող օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, դրանց համապատասխան բանկային կանոնների (Բանկի կանոնների), բանկային բնագավառում կիրառվող գործարար շրջանառության սովորույթների, վճարահաշվարկային համակարգերի (ArCa, MasterCard կամ Visa International) միջազգային պրակտիկայում օգտագործվող կանոնների, ինչպես նաև սույն Կանոնների: Օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների դեպքերում, սույն Կանոնները, մինչև դրանցում համապատասխան փոփոխությունների կատարումը, կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում օրենսդրությանը, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

2.4 Քարտային հաշիվը բացվում է այն արժույթով, որը Քարտապանը նշել է Դիմում-պայմանագրում: Քարտային հաշիվը կարող է բացվել առավելագույնը 4 (չորս) արժույթներով՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, ԵՎՐՈ և ՌԴ ռուբլի:

2.5 Քարտը տրամադրվում է Քարտապանին՝ առավելագույնը 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Երևան քաղաքում, 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության մարզերում և Արցախի Հանրապետությունում:

2.6 Քարտի սպասարկման միջնորդավճարի առաջին վճարումը Քարտապանը կատարում է քարտը պատվիրելիս, իսկ հաջորդ վճարումները՝ Բանկի սակագներով սահմանված պարբերականությամբ՝ կանխավճարային կարգով:

2.7 Քարտը գործում է մինչև Քարտի վրա նշված ամսվա վերջին օրը: Գործողության ժամկետը լրանալուց հետո կամ Պայմանագրի լուծման դեպքում Քարտն արգելափակվում է և համակարգի սպասարկման կետերի կողմից ընդունման ենթակա չէ:

2.8 Քարտապանի կողմից Քարտի և քարտային հաշվի փակման դիմում ներկայացնելիս Բանկը փակում է դիմումում նշված քարտը, կցված քարտերը և համապատասխան քարտային հաշիվը:

2.9 Քարտի գործողության ժամկետը լրանալիս Քարտապանը Բանկ է ներկայացնում վերաթողարկման դիմում Քարտի գործողության ժամկետի լրանալուն նախորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Քարտային հաշվին ապահովում է Սակագներով սահմանված Քարտի վերաթողարկման համար անհրաժեշտ դրամական միջոցներ:

2.10 Կցված քարտի տրամադրման պայմաններ.

2.10.1 Քարտապանը կարող է դիմել Կցված քարտ ստանալու համար՝ իր և Կցված քարտի Քարտապանի կողմից ստորագրված Դիմում-պայմանագրերի հիման վրա (KIDS քարտի դեպքում Կցված քարտի Քարտապանի ստորագրությունը չի պահանջվում) և այլ անհրաժեշտ փաստաթղթեր Կցված քարտի Քարտապանի վերաբերյալ: Կցված քարտերի նկատմամբ ևս տարածվում են Կանոնները և Սակագները: Կցված քարտերով գործառնությունները արտացոլվում են Հիմնական քարտի Հաշվում: Քարտապանի դիմումի համաձայն, և/կամ ելնելով քարտատեսակի համար սահմանված պայմաններից Կցված քարտերի համար կարող են սահմանվել օգտագործման սահմանափակումներ:

2.10.2 Քարտապանն /հիմնական քարտի/ իրավունք ունի ցանկացած ժամանակ դադարեցնել կամ ժամանակավոր կասեցնել(բլոկավորել/արգելափակել) Կցված քարտերից յուրաքանչյուրը՝ ներկայացնելով գրավոր դիմում:

2.10.3 Հիմնական քարտի Քարտապանը լիակատար նյութական պատասխանատվություն է կրում Կցված քարտ(եր)ով կատարված գործարքների և դրանով առաջացած այլ պարտավորությունների համար՝ սույն Կանոններով սահմանված կարգով:

2.10.4 Պայմանագրի լուծման դեպքում Կցված քարտ(եր)ը դադարում են գործել, իսկ դրա հետ կապված Հաշվի պայմանագիրը (պայմանագրերը) համարվում է լուծված :

2.11 Քարտով կարող են իրականացվել հետևյալ տեսակի գործառնություններ՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս ստանալ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով կանխիկ դրամական միջոցներ,
2) Հայաստանի Հանրապետության տարածքում վճարել ապրանքների/ծառայությունների դիմաց Հայաստանի Հանրապետության արժույթով, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ նաև արտարժույթով,
3) Ինտերնետ/վիրտուալ միջավայրում վճարել ապրանքների/ծառայությունների համար ՀՀ արժույթով և արտարժույթով,
4) Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով այլ գործառնություններ, եթե դրանց կատարման համար օրենքով կամ այլ նորմատիվ իրավական ակտերով նախատեսված չեն սահմանափակումներ:

2.12 Քարտային հաշվին կանխիկ եղանակով համալրում իրականացնելու համար Քարտապանը մոտենում է Սպասարկող ստորաբաժանում և կատարում է համալրումը: Քարտային հաշվին կանխիկ եղանակով համալրումներ կարող են իրականացվել նաև կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, Բանկի կամ այլ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների վճարային տերմինալների միջոցով:

Քարտային հաշվին անկանխիկ եղանակով համալրում իրականացվում է Բանկի կամ այլ բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, էլեկտրոնային դրամապանակների, Հեռակառավարման համակարգերով և օրենքով չարգելված այլ համակարգերի միջոցով, Քարտապանի կամ այլ անձանց կողմից:

2.13 Քարտապանը տնօրինում է Հաշվում եղած դրամական միջոցներն առանց սահմանափակման, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերում Հաշվում եղած դրամական միջոցների վրա արգելանք դնելու կամ Հաշվով գործառնությունները դադարեցնելու կամ օրենքով կամ սույն Կանոններով, Հավելվածներով

նախատեսված Հաշվում եղած դրամական միջոցները տնօրինելու ուղղությունների, պայմանների սահմանափակման այլ միջոցներ կիրառելու դեպքերի:

2.14 Բանկը Հաշվից դրամական միջոցները դուրս է գրում Քարտապանի Հաշվում եղած դրամական միջոցների սահմաններում՝ բացառությամբ Բանկի սակագնով նախատեսված, ինչպես նաև վճարահաշվարկային համակարգերի կանոններով սահմանված դեպքերի:

2.15 Ֆիզիկական անձ քարտապանին Քաղվածքները տրամադրվում են գրավոր եղանակով՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ Քարտապանն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է Քաղվածքները էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ Քաղվածքները փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Ընդ որում, Քարտապանն իրավունք ունի իր գրավոր դիմումով միակողմանի փոփոխելու հաղորդակցման միջոցը ոչ ավելի, քան տարին մեկ անգամ, և այդ փոփոխությունը կիրառվում է գրավոր դիմումը Բանկի կողմից ստանալուց 30 օր հետո իրականացվող հաղորդակցման նկատմամբ: Քարտապանն իրավունք ունի նաև Քաղվածքներն ստանալու Բանկի տարածքում՝ առձեռն, որի դեպքում Բանկը պարտավոր է նույն տեղեկատվությունը տրամադրել Քարտապանին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով:

Ֆիզիկական անձ քարտապանին Քաղվածքների անվճար տրամադրման պարբերականությունը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն, որը սակայն չպետք է գերազանցի մեկ ամիսը:

Անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ քարտապանին Քաղվածները տրամադրվում են Բանկի կողմից նախատեսված կարգով և եղանակներով, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի միջև առանձին կնքված պայմանագրով (համաձայնագրով):

2.16 Բանկը, Քարտապանների կողմից սույն Կանոններին և Սակագներին ծանոթանալու նպատակով, սույն Կանոնները (այդ թվում Կանոններում կատարված փոփոխություններն ու լրացումները) և Սակագները իր հայեցողությամբ հրապարակում է տեղեկատվության այնպիսի միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս ծանոթանալու այդ տեղեկություններին: Ըստ այդմ էլ Բանկը Կանոններին և Սակագներին վերաբերելի տեղեկությունները հրապարակում է՝

ա) Ինտերնետային կայքի միջոցով.

բ) Բանկի մասնաճյուղերում և Քարտապանների սպասարկում իրականացնող այլ ստորաբաժանումներում առկա տեղեկատվական վահանակներում հայտարարությունների տեղադրման միջոցով.

գ) Քարտապանների էլեկտրոնային փոստային հասցեներով ուղարկելու միջոցով.

դ) Հեռակառավարման համակարգերի միջոցով.

ե) այլ միջոցներով, որոնք հնարավորություն են տալիս Քարտապանին ստանալու և հավաստիանալու, որ տվյալ տեղեկությունները ստացել է Բանկից:

Բանկն իր բացառիկ հայեցողությամբ տեղեկությունները հրապարակում է վերոհիշյալ միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

ԲԱԺԻՆ 3. ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ, ՔԱՐՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Քարտային հաշվի բացումը ու սպասարկումն իրականացվում է օրենսդրությանը և սույն Կանոններին համապատասխան:

Բանկն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիր կնքելուց և մերժել Քարտ թողարկելը և դրա սպասարկման համար Հաշիվ բացելը միայն օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Բանկը պարտավորվում է թողարկել և Քարտապանին տրամադրել Հիմնական քարտը, իրականացնել Քարտապանի կանխիկի ստացման և(կամ) անկանխիկ գործառնությունների սպասարկումը, որը ներառում է Քարտապանի բացած հաշվի վրա մուտք եղող դրամական միջոցների մուտքագրումը, հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Քարտապանի տրված կարգադրությունների (ներառյալ Հիմնական քարտի միջոցով) կատարումը:

3.2 Բանկը Քարտապանի համար բացում է Հաշիվ, եթե՝

- Քարտապանը Բանկին ներկայացրել է Հաշվի բացման և վարման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, և
- Բանկում բացակայում է Հաշվի բացմանը խոչընդոտող պետական իրավասու և այլ մարմինների որոշումները:

3.3 Քարտապանն իրեն պատկանող դրամական միջոցների շարժը (մուտքագրումներ և (կամ) ելքագրումներ), այդ թվում՝ վարկային միջոցների, կարող է իրականացնել կանխիկ/անկանխիկ եղանակով՝ սույն Կանոնների համաձայն:

3.4 Հաշվի համարը սահմանվում է Բանկի կողմից ինքնուրույնաբար և կարող է փոփոխվել Բանկի կողմից միակողմանիորեն օրենսդրությամբ և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով:

3.5 **[Կիրառելի է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** Քարտապանի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու՝ անձանց իրավունքները հավաստվում է ստորագրությունների նմուշների և/կամ կնիքի դրոշմի (առկայության դեպքում) քարտը (հետայսու տեքստում՝ Ստորագրությունների քարտ), ինչպես նաև օրենքով, դրան համապատասխան բանկային կանոններով ու Պայմանագրով նախատեսված փաստաթղթերը Բանկին ներկայացնելու միջոցով: Քանի դեռ Քարտապանը Բանկին չի ներկայացրել Ստորագրությունների նոր քարտ, գործող Ստորագրությունների քարտը համարվում է միակ գործող փաստաթուղթը, որի հիման վրա իրականացվում են Հաշվով գործառնություններ:

Այն դեպքերում, երբ Քարտապանը Բանկին ներկայացնում է իր անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու լիազորված անձանց վերաբերյալ հակասական տեղեկություններ, որոնք հիմնված են Քարտապանի կառավարման իրավասու մարմնի որոշումների, հրամանների վրա, և որոնք չեն համընկնում Քարտապանի կողմից ներկայացված Ստորագրությունների քարտում նշված լիազորված անձանց հետ, Բանկը Քարտապանի Հաշվով իրականացնում է գործառնություններ, ընդունում է վճարահաշվարկային փաստաթղթեր և այլ կարգադրություններ, Հաշվի վերաբերյալ հարցումները միայն այն անձանց ստորագրություններով, որոնց իրավունքները Քարտապանը հավաստել է օրենքով, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, դրանց համապատասխան բանկային կանոններով և Բանկի ներքին կանոններով նախատեսված փաստաթղթերը Բանկին ներկայացնելու միջոցով, ներառյալ՝ Ստորագրությունների քարտով:

Այն դեպքերում, երբ Քարտապանի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու լիազորված անձինք ժամանակավորապես չեն կարող իրականացնել իրենց լիազորությունները, Բանկը Հաշվով գործառնություններն իրականացնում է Քարտապանի օրենքին համապատասխան գրավոր հասարակ ձևով ձևակերպված լիազորագրի հիման վրա՝ դրանում նշված ժամկետի ընթացքում և լիազորագրի բնօրինակը ներկայացնելու դեպքում, կամ հրամանի, որոշման հիման վրա:

Ամեն դեպքում, Բանկը կասեցնում է Հաշվով գործառնությունների իրականացումը, եթե հակասություններ կան Քարտապանի անունից դրամական միջոցներ փոխանցելու և վճարելու կարգադրություններ անելու Բանկում գտնվող լիազորված անձանց միջև: Կասեցումը վերացվում է այդ հակասությունները վերանալու դեպքում:

3.6 Հաշվին ներկայացվող կարգադրությունները Բանկն ընդունում է կատարման անկախ դրանցում նշված դրամական գումարների չափերից և Հաշվում դրամական միջոցների առկայությունից, եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Քարտապանի միջև կնքված առանձին համաձայնագրով կամ սույն Կանոններով:

Հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, որոնց գումարը բավարար է Հաշվին ներկայացված բոլոր պահանջները բավարարելու համար, այդ միջոցները դուրս են գրվում Քարտապանի կարգադրությունները և դուրսգրման այլ փաստաթղթերը մուտք լինելու հաջորդականությամբ (օրացուցային հաջորդականություն), եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Հաշվում եղած դրամական միջոցները բավարար լինելու փաստը որոշվում է Բանկի կողմից՝ դրամական միջոցների փոխանցումների իրականացումը կարգավորող Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով կամ Բանկի ու Քարտապանի միջև կնքված առանձին համաձայնագրով:

Եթե Քարտապանի կարգադրությունները և նրան ներկայացված բոլոր պահանջները բավարարելու (կատարելու) համար Հաշվում եղած դրամական միջոցները բավարար չեն, ապա Բանկի կողմից Քարտապանի կարգադրությունները կարող են ընդունվել կատարման և դրվել հերթի՝ ժամանակին չկատարված կարգադրությունների շարքում: Այդպիսի կարգադրությունները Բանկի կողմից կատարվում են սույն Կանոններով նախատեսված ժամկետներում՝ օրենսդրությամբ սահմանված դրամական միջոցների դուրսգրման հաջորդականությանը համապատասխան:

Եթե Հաշվով գործառնություններ կատարելուն խոչընդոտում են պետական իրավասու և այլ մարմինների որոշումները, ապա Քարտապանի կարգադրությունները (այդ թվում չկատարված կարգադրությունների շարքում գտնվող), որոնց վրա տարածվում են այդ որոշումները, դրվում են գործառնություններ իրականացնելուն սպասող չկատարված կարգադրությունների շարքում: Այդպիսի կարգադրությունների կատարումը Բանկի կողմից իրականացվում է գործող օրենսդրությամբ սահմանված դեպքերում և հաջորդականությամբ Հաշվով գործանություններ կատարելու համար թույլտվություն ստանալուց կամ սահմանափակումները վերանալուց հետո:

3.7 Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով, Հավելվածներով կամ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրերով, ապա Բանկը Հաշվից դրամական միջոցներ դուրս է գրում՝

- Քարտապանի վճարման հանձնարարականների, վճարահաշվարկային փաստաթղթերի և այլ կարգադրությունների հիման վրա.
- ինկասո հանձնարարականների և առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) օրենքի ուժով Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու լիազորություններ (իրավասություններ) ունեցող անձանց և(կամ) մարմինների (բռնագանձում իրականացնող) կողմից Հաշվին ներկայացված այլ կարգադրությունների հիման վրա.

- **[կիրառելի է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** ինկասո հաշվարկների դեպքում դրամական միջոցներ ստացողի կողմից Հաշվին ներկայացվող ինկասո հանձնարարականների հիման վրա.

- վճարման պահանջագրերի և ստացողի պահանջներով դրամական միջոցների փոխանցման հաշվարկների իրականացման դեպքում դրամական միջոցներ ստացողի կողմից Հաշվին ներկայացվող Բանկի սահմանած ձևով կազմված այլ կարգադրությունների (ուղիղ դեբետագրում) հիման վրա.

- **[կիրառելի է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** Բանկի տրամադրած չեկային գրքույկի (չեկերի ձևաթղթերի) վրա կազմված և գործող օրենսդրությամբ, սույն Կանոններով սահմանված պարտադիր վավերապայմաններ պարունակող Քարտապանի դուրս գրած չեկի հիման վրա, եթե Հաշվից դուրս գրումն իրականացվում է առանց Քարտի օգտագործման.

- վճարահաշվարկային փաստաթղթերի և Բանկի այլ կարգադրությունների, այդ թվում, բայց ոչ ներառյալ առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) գործող օրենսդրությանը, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին և սույն Կանոններին համապատասխան Քարտապանի կամ այլ անձանց կարգադրությունների հիմքով կազմված Բանկի կարգադրությունների հիման վրա:

Այն կարգադրությունները (հանձնարարականները), որոնց համար իրավական ակտերով սահմանված չեն պարտադիր վավերապայմաններ և ձևեր, պետք է կազմված լինեն Բանկի կողմից սահմանված ձևերով:

Վերը նշված փաստաթղթերը Բանկն ընդունում է կատարման, եթե դրանք կազմված են գործող օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված պահանջներին համապատասխան:

Հաշվով գործառնություններ իրականացնելու համար կարգադրությունների (հանձնարարականների) ցանկը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն:

3.8 Եթե Հաշվին ներկայացված Քարտապանի՝ Բանկի սահմանած ձևով կազմված կարգադրության (հանձնարարականի) հիման վրա դուրս են գրվում դրամական միջոցներ՝ արտարժույթի փոխարկման գործարքներ իրականացնելու համար, ապա արտարժույթի փոխարկման գործարքներն իրականացվում են դրամական միջոցների դուրս գրման օրվա դրությամբ Բանկի սահմանած փոխարժեքներով:

3.9 Եթե այլ բան նախատեսված չէ սույն Կանոններով, Հավելվածներով կամ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրերով, ապա Բանկը Քարտապանի Հաշվին դրամական միջոցները մուտքագրում է վճարահաշվարկային փաստաթղթերի և դրամական միջոցների փոխանցման այլ կարգադրությունների (հանձնարարականների) հիման վրա:

Եթե Հաշվին փոխանցվել են դրամական միջոցներ, որոնք տարբերվում են Հաշվի արժույթից, ապա Բանկը Հաշվին մուտքագրում է դրան համարժեք գումար՝ հաշվարկված Բանկի կողմից անկանխիկ գործարքների համար տվյալ գործառնության իրականացման օրվա դրությամբ սահմանած փոխարժեքով:

3.10 Քարտապանի կարգադրությունները (հանձնարարականները) անկանխիկ կատարման ընդունելու, հետկանչելու, վերադարձնելու (չեղարկելու) կարգը (ընթացակարգը) սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն և Բանկի ընտրությամբ Քարտապանին հասանելի է դարձվում սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

3.11 Քարտապանի Հաշվին դրամական միջոցների մուտքագրումն իրականացվում է Բանկի կողմից սահմանված կարգով, ոչ ուշ, քան դրամական միջոցները կամ համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, պայմանով, որ սահմանված ժամկետում Բանկը ստացել է պատշաճ ձևով կազմված փաստաթղթերը, որոնցից միանշանակ հետևում է, որ դրամական միջոցներ ստացողը Քարտապանն է և դրանք պետք է մուտքագրվեն Հաշվին: Միաժամանակ, եթե այլ բան սահմանված(նախատեսված) չէ գործող օրենսդրությամբ, սույն Կանոններով, Հավելվածներով կամ Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով), թույլատրվում է Քարտապանի Հաշվին դրամական միջոցների մուտքագրումը երկու վավերապայմաններով, որոնք սահմանվում են Բանկի կողմից միակողմանիորեն և Բանկի ընտրությամբ Քարտապանին հասանելի է դարձվում սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցներից որևէ մեկով կամ մի քանիսով:

Եթե Բանկի ստացած վճարային փաստաթուղթը հնարավորություն չի տալիս միանշանակ որոշելու դրամական միջոցներ ստացող Քարտապանին (օրինակ, փաստաթուղթը պարունակում է Քարտապանի աղավաղված կամ ոչ ճիշտ անվանումը, Հաշվի համարը և այլն), ապա դրամական միջոցները մուտքագրվում են Քարտապանի հաշվին միայն գործող օրենսդրությանը, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան Բանկի կողմից նախատեսված կարգով և ժամկետներում դրամական միջոցներ ստացողին պարզելուն ուղղված միջոցառումներն իրականացումից հետո:

3.12 Բանկը Քարտապանի կարգադրությամբ (հանձնարարականով) առանց Քարտի օգտագործման Հաշվից կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում (եթե Հաշվից կանխիկ դրամական միջոցներ տալը արգելված չէ օրենսդրությամբ) կամ անկանխիկ փոխանցում է կատարում ոչ ուշ, քան համապատասխան վճարային փաստաթուղթը Բանկ մուտք լինելու հաջորդ օրը, ինչպես նաև օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ

իրավական ակտերով և սույն Կանոններով սահմանված (նախատեսված) դեպքերում Քարտապանի կողմից Հաշվից դրամական միջոցների ելքագրման գործառնություններ իրականացնելու համար Բանկին ներկայացված պատշաճ ձևով կազմված այլ փաստաթղթերի հիման վրա: Նշված գործառնությունները Բանկի հայեցողությամբ կարող են իրականացվել ավելի կարճ ժամկետներում՝ Բանկի կողմից նախատեսված կարգով և պայմաններով, այդ թվում՝ Սակագներով:

3.13 Դիմում-պայմանագրի հիման վրա Բանկը Քարտապանի Հաշվից կանխիկ դրամական միջոցներ է տրամադրում չեկային գրքույկի (չեկերի ձևաթղթերի) կամ Քարտապանի գրավոր հայտերի հիման վրա կամ Քարտի օգտագործմամբ:

3.14 **[կիրառելի է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** Եթե Դիմում-պայմանագրով նախատեսված է, որ Հաշվից կանխիկ դրամական միջոցները տրամադրվում են չեկային գրքույկի (չեկերի ձևաթղթերի) միջոցով, ապա Քարտապանին է հանձնվում վերջինիս կողմից Դիմում-պայմանագրում նշված համապատասխան պայմանի նշագրման և համաձայնության տրամադրման փաստի հիման վրա կամ Հաշվի պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ՝ լրացուցիչ համաձայնագրի հիման վրա: Ընդ որում՝ Դիմում-պայմանագրում չեկային գրքույկ ստանալու պայմանին տրված համաձայնությունը Բանկի կողմից ակցեպտավորելու հանգամանքը բավարար է Քարտապանի՝ Հաշվին առկա միջոցները չեկեր դուրս գրելով տնօրինելու իրավասությունը հավաստելու համար: Բանկը Քարտապանի Հաշվից կանխիկ գումարների տրամադրումը իրականացնում է անվանական չլիմիտավորված բանկային չեկերով, եթե այլ բան չի սահմանվում լրացուցիչ համաձայնությամբ, և Քարտի միջոցով: Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող Քարտապանի կողմից Հաշվից կանխիկ դրամական միջոցներ կարող են տրվել բացառապես չեկային գրքույկով՝ դրանում նշված լիազորված անձին:

Չեկային գրքույկի միջոցով Հաշվի սպասարկման համար Բանկը Քարտապանից գանձում է համապատասխան վճար՝ Սակագներով նախատեսված չափերով, և հետագայում չեկային գրքույկի միջոցով Հաշվի սպասարկումից Քարտապանի հրաժարումը հիմք չէ վճարված վճարները վերահաշվարկելու կամ հետ վերադարձնելու համար:

Չեկով Քարտապանի հաշվից կանխիկ դրամական միջոցները վճարվում են հետևյալ ժամկետներում՝

ա) չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքում, պետք է վճարման ներկայացվի Բանկին տասը օրացուցային օրվա ընթացքում,

բ) չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, պետք է վճարման ներկայացվի Բանկին երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

Սույն ժամկետները կիրառելի չեն չեկային գրքույքով կամ Քարտի օգտագործմամբ Հաշվից կանխիկ դրամական միջոցներ տրամադրելու նկատմամբ:

Ընդ որում՝ չեկի վճարման սույն ժամկետները գործում են, եթե այլ բան նախատեսված չէ Կենտրոնական բանկի կողմից՝ չեկերով հաշվարկներ իրականացնելու գործառնությունների կանոնակարգման ընթացքում:

Բանկը չեկը վճարում է Քարտապանի սույն Կանոններին համապատասխան բացված մեկ կամ մի քանի հաշիվներում առկա միջոցներից:

Օրենսդրությամբ սահմանված վավերապայմանների պահպանմամբ Քարտապանի տրամադրած և Բանկին վճարման ներկայացված չեկերը չվճարելու դեպքում Բանկը կրում է պատասխանատվություն, օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.15 Հաշվից դրամական միջոցների փոխանցման Բանկի պարտավորությունը Քարտապանի հանդեպ համարվում է պատշաճ կատարված՝

- ստացողի դրամական միջոցները սպասարկող օպերատորի թղթակցային հաշվին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների մուտքագրման պահից, եթե դրամական միջոցները փոխանցվում են Բանկի Քարտապան չհանդիսացող ստացողի հաշվին, կամ

- ստացողի Բանկում բացված բանկային հաշվին համապատասխան գումարի չափով դրամական միջոցների մուտքագրման պահից, եթե դրամական միջոցները փոխանցվում են Բանկի Քարտապանի հասցեով:

Եթե արտարժույթով դրամական միջոցների փոխանցման ժամկետը արտարժույթի էմիտենտ-պետությունում, որտեղ բացված է բանկային հաշիվը, համարվում է ոչ աշխատանքային օր, ապա վերը նշված դրամական միջոցների փոխանցումը Բանկի կողմից իրականացվում է այդ պետությունում հաջորդ աշխատանքային օրը:

Հաշվից դրամական միջոցներ տալու Բանկի պարտավորությունը Քարտապանի հանդեպ համարվում է պատշաճ կատարված Բանկի դրամարկղից դրամարկղային չեկում նշված գումարի չափով դրամարկղային չեկում նշված Քարտապանի լիազորված անձին համապատասխան գումարի չափով դրամական միջոցներ տալու, իսկ դրամական միջոցներն ինկասացնելու մասին համաձայնագիր (պայմանագիր) առկայության դեպքում՝ դրամական միջոցները ինկասացիոն կազմակերպությանը հանձնելու պահից:

3.16 Բանկի կողմից Քարտապանի Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները, ինչպես նաև սույն Կանոններով, Հավելվածներով և Սակագներով նախատեսված Բանկի ծառայությունների վճարները, Հաշվով գործառնությունների իրականացման համար Բանկի կատարած ծախսերը (հետայսու տեքստում՝ «Կոմիսիոն

վարձատրություններ»), ներառյալ սույն Կանոններով նախատեսված տուժագումարներն ու այլ դրամական պատժամիջոցները, ինչպես նաև սույն Կանոններով և Սակագներով Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած պարտավորությունների կատարման նպատակով Բանկի կողմից անակցեպտ կարգով սույն Կանոններով նախատեսված ժամկետներում դուրս են գրվում Քարտապանի Հաշվից առանց վերջինիս լրացուցիչ կարգադրության (համաձայնության)՝ Բանկի վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա:

3.16.1 Միանալով սույն Կանոններին Քարտապանը դրանով իսկ նախապես համաձայնվում է սույն Կանոնների 3.16 կետում նշված դեպքերում Բանկի վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի հիման վրա Հաշվից դրամական միջոցների դուրսգրմանը՝ Բանկի վճարահաշվարկային փաստաթղթերի և այլ կարգադրությունների մասնակի կատարման հնարավորությամբ:

3.17 Բանկի և Քարտապանի միջև կնքված վարկային (ներառյալ վարկային գծի, օվերդրաֆտի), երաշխավորության, գրավի, բանկային երաշխիքի և այլ պայմանագրերով (համաձայնագրերով), ինչպես նաև Քարտապանի նկատմամբ հետադարձ (ռեգրեսային) պահանջներով Բանկին հասանելիք դրամական միջոցները Բանկն անակցեպտ կարգով (առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (հանձնարարության) դուրս է գրում Քարտապանի Հաշվից: Դրամական միջոցների դուրս գրումը կատարվում է Հաշվին դրամական միջոցներ ստացվելուն պես:

3.18 Քարտապանն իրավունք ունի կարգադրել Բանկին Հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ Քարտապանի պարտավորությունների կատարման հետ:

Բանկն ընդունում է այդ կարգադրությունները, պայմանով, որ դրանցում գրավոր նշվեն անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են ընձեռում համապատասխան պահանջը ներկայացնելիս նույնացնել նման պահանջի իրավունք ունեցող անձին:

3.19 Հաշվում առկա դրամական միջոցներն առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) դուրս են գրվում ինկասո հանձնարարությունների հիման վրա հետևյալ դեպքերում.

3.19.1 դրամական միջոցների բռնագանձում իրականացնողների կարգադրությամբ.

3.19.2 Կողմերի միջև կնքված ինկասո հաշվարկների միջոցով Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված կարգով:

3.20 **[կիրառելի է իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** Եթե Քարտապանին կամ վերջինիս նշած անձին, Հաշվից կանխիկ գումար տրամադրելու համար օգտագործվում է Բանկի տրամադրած չեկային գրքույկը (ձևաթղթերը), ապա կանխիկ դրամ ստանալու նպատակով Քարտապանը կարող է դուրս գրել անվանական չլիմիտավորված չեկ, որը պետք է լրացված լինի հետևյալ կանոնների համաձայն՝

ա) Չեկը լրացվում է ձեռագիր և առանց ուղղումների: Ուղղումներով Չեկը համարվում է անվավեր և Բանկի կողմից ենթակա չէ ընդունման և վճարման:

բ) Չեկի բոլոր տողերը լրացվում են անմիջապես տողի սկզբից՝ առանց ազատ հատված թողնելու կամ ազատ հատվածը փակվում է =[redacted] նշանով:

գ) Չեկը լրացվում է հայերեն: Հայերենի հետ միաժամանակ Չեկը կարող է լրացվել նաև անգլերեն կամ ռուսերեն լեզուներով:

դ) Չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքում, պետք է վճարման ներկայացվի Բանկին տասը օրացուցային օրվա ընթացքում:

ե) Չեկը, որը դուրս է գրվել Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, պետք է վճարման ներկայացվի Բանկին երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

զ) «Չեկ տվողի անունը (անվանումը) » տողում լրացվում է իրավաբանական անձի կամ Անհատ Ձեռնարկատիրոջ անվանումը:

է) «Չեկը կազմելու վայրը» տողում լրացվում է Բանկի գլխամասային գրասենյակի կամ մասնաճյուղի գտնվելու քաղաքը, որտեղ Չեկը ներկայացվում է վճարման:

ը) «Հաշվի համարը» տողում լրացվում է այն հաշվեհամարը, որից պետք է իրականացվի դրամական միջոցների կանխիկացում:

թ) «Մասնաճյուղ» տողում լրացվում է Գլխամասային գրասենյակ կամ այն մասնաճյուղի անվանումը, որտեղ Չեկը ներկայացվում է վճարման:

ժ) «Չեկը կազմելու ամսաթիվը» տողում լրացվում է Չեկի դուրսգրման ամսաթիվը տառերով:

ի) «Սույնով հանձնարարում եմ վճարելե տողում լրացվում է գումարը ստացողի անունը, ազգանունը:

լ) «ՀՀ դրամ» տողի դիմաց լրացվում է Չեկի գումարը թվերով:

խ) «Գումարը բառերով» տողում լրացվում է Չեկի գումարը բառերով (առաջին տառը մեծատառով):

ծ) «Ստորագրություն» տողում դրվում է Չեկատուի ստորագրությունը, Հաճախորդի ցանկությամբ նաև կնիքը: Ստորագրություն դրվում է նաև Չեկի դարձերեսին:

կ) «Նպատակ» տողում լրացվում է գործարքի նպատակը և նպատակին համապատասխան գումարի չափը:

Քարտապանը պատասխանատվություն է կրում սույն կետով սահմանված վավերապայմանների չպահպանման համար:

ԲԱԺԻՆ 4. ՔԱՐՏՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Գործարքներ.

4.1.1 Քարտի/քարտի տվյալների օգտագործմամբ իրականացվում են հետևյալ տեսակի գործարքները, եթե առանձին տեսակի քարտերի համար Բանկի կողմից սահմանված պայմաններով, սակագներով և (կամ) պայմանագրերով սահմանափակումներ նախատեսված չեն՝

1) կանխիկի մուտքագրում՝ Քարտով կանխիկ մուտքի հնարավորություն ունեցող սարքավորման միջոցով, Բանկի կամ այլ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների վճարային տերմինալների միջոցով, ինչպես նաև Ստորաբաժանումներում,
2) կանխիկի ելքագրում՝ Քարտով կանխիկի ելքի հնարավորություն ունեցող բանկոմատի, ՊՈՍ-տերմինալի /POS/ միջոցով, ինչպես նաև Ստորաբաժանումներում,
3) փոխանցում/փոխանցման ստացում՝ Բանկոմատի միջոցով, բանկերում, ինչպես նաև Հեռակառավարվող համակարգերի և վճարային/վճարահաշվարկային համակարգերի միջոցով,
4) անկանխիկ եղանակով վճարում/հետվերադարձ ապրանքների և ծառայությունների դիմաց՝ առևտրի/սպասարկման կետերում՝ ներառյալ ինտերնետ միջավայրում:

4.1.2 Բանկի դրամարկղում ակտիվ Քարտին կանխիկ մուտքագրված գումարը, ինչպես նաև ոչ քարտային հաշիվներից Քարտային հաշվին, կամ Հեռակառավարման համակարգերով փոխանցումը Քարտի վրա հասանելի է դառնում որպես կանոն մինչև 10 (տասը) րոպեի ընթացքում (պրոցեսինգային կենտրոնում տեխնիկական կամ ծրագրային խնդիրների բացակայության դեպքում): Բանկի գործառնական համակարգում մինչև տվյալ Գործառնական օրվա ժամը 11:00 ձևակերպված ոչ ակտիվ Քարտերի մուտքերը, ինչպես նաև Քարտային հաշվից,այլ բանկերից և Հեռակառավարման համակարգերով փոխանցումները Քարտին հասանելի են դառնում որպես կանոն մինչև տվյալ Գործառնական օրվա ժամը 12:00, հաջորդիվ գումարները Քարտին ակտիվանում են գործարքի ձևակերպումից 1.5 ժամվա ընթացքում: Ժամը 17:30-ից հետո ձևակերպված գործարքները ակտիվանում են հաջորդ Գործառնական օրվա ընթացքում:

4.1.3 Գործարքի գումարը Քարտից ելքագրվում է անմիջապես, իսկ Քարտային հաշվում որպես կանոն հաշվառվում է հետևյալ ժամկետներում՝

- Բանկի Սպասարկման կետերում և ArCa համակարգում կատարված գործարքների դեպքում հաջորդ աշխատանքային օրը,
- ArCa համակարգից դուրս կատարված և միջազգային գործարքների դեպքում 3-7 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.4 .Բանկոմատներից կանխիկացման գործարքներ իրականացնելու նկատմամբ սահմանվում է մեկ օրվա ընթացքում կատարվող կանխիկացման գործարքի/ների Վճարային սահմանաչափ և քանակ համաձայն Սակագների:

4.1.5 ՀՀ տարածքում գործող կանխիկացման կետերում Քարտի մնացորդի հարցում կատարելիս մնացորդն արտացոլվում է ՀՀ դրամով(փոխարկումը կատարվում է Բանկի կողմից սահմանված փոխարժեքով):

4.1.6 Քարտով գործարքները հնարավոր է իրականացնել ինչպես Քարտային հաշվի արժույթով, այնպես էլ Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով: Գործարքի արժույթի և Քարտային հաշվի արժույթի համապատասխանության դեպքում փոխարկում չի իրականացվում: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով Գործարքի հավաստագրման պահին Գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով կատարված գործարքների հաշվառման համար Գործարքի գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի: Գործարքի գումարը Քարտային հաշվի արժույթի փոխարկելու արդյունքում փոխարժեքների տարբերությունից առաջացած վնասների, արժույթային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

4.1.7 ՀՀ տարածքում Քարտով կատարված գործարքների գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի Գործարքի հաշվառմանը նախորդող Գործառնական օրվա ավարտի համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:

4.1.8 ՀՀ սահմաններից դուրս Քարտով կատարված գործառնությունների գումարը փոխարկվում է Քարտային հաշվի արժույթի հետևյալ կերպ.

Քարտի արժույթ	Գործարքի արժույթ	Փոխարկում

ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար/ ՌԴ ռուբլի	Եվրո	Եվրոն փոխարկվում է քարտի արժույթի գործարքի հաշվառմանը նախորդող Գործառնական օրվա ավարտի համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
Եվրո	Եվրո	Գործարքը հաշվառվում է գործարքի արժույթով՝ առանց փոխանակման:
ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար /Եվրո/ՌԴ ռուբլի	Այլ արժույթ	VISA/MasterCard քարտերի դեպքում գործարքը փոխարկվում է նախ Եվրոյի վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքով, որից հետո կիրառվում է նաև Բանկի կողմից սահմանված 2% միջնորդավճար*, այնուհետև ստացված Եվրոյով գումարը փոխարկվում է քարտի արժույթի գործարքի հաշվառմանը նախորդող Գործառնական օրվա ավարտի համար Բանկի կողմից սահմանված փոխարժեքով: *Ելքային գործառնությունների դեպքում 2% գումարվում է գործարքի գումարին, իսկ հետվերադարձի դեպքում՝ 2% նվազեցվում:

4.2 Քարտի և PIN կոդի տրամադրման, օգտագործման և պահպանման կանոնները.

4.2.1 Բանկը Քարտը ակտիվացնում է Քարտը Քարտապանին տրամադրելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

4.2.2 Քարտը և Պին-կոդը /PIN/ Քարտապանին տրամադրվում են առանձին՝ փակ ծրարներով բացառությամբ OTP կիրառմամբ PIN կոդի ձևավորման դեպքի, որի պարագայում Պին-կոդը /PIN/, Քարտը ստանալուց հետո, սահմանվում է Քարտապանի կողմից:

Ընդ որում, Պին-կոդը /PIN/ փակ ծրարով Քարտապանին տրամադրելու պահանջը համարվում է բավարարված, եթե այն Քարտապանին տրամադրվել է էլեկտրոնային եղանակով վերջինիս կողմից նշված հեռախոսին/հեռախոսահամարին (օրինակ՝ SMS ուղարկելու միջոցով՝ OTP) կամ էլեկտրոնային փոստին՝ ժամանակավոր Պին-կոդ /PIN/ տրամադրելու միջոցով (Քարտապանի կողմից ինքնուրույն նոր Պին-կոդ /PIN/ ձևավորելու նպատակով):

4.2.3 Պին-կոդը /PIN/ պարտադիր է Բանկոմատներից կանխիկ գումար ստանալու և Պոս-տերմինալներով /POS/ գործառնություններ կատարելու համար, բացառությամբ առանց շփման քարտերի, որոնց դեպքում Պին-կոդ /PIN/ պահանջվում է վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված սահմանաչափից ավելի գործառնություններ կատարելու դեպքում:

4.2.4 Քարտապանը կարող է իր հայեցողությամբ փոխել Պին-կոդ /PIN/ ԹողարկողԲանկի բանկոմատի միջոցով: Պին-կոդի /PIN/ փոփոխման համար անհրաժեշտ է մուտքագրել գործող Պին-կոդը /PIN/, որից հետո սահմանել նոր Պին-կոդ /PIN/:

4.2.5 Քարտի Պին-կոդի /PIN/ և CVV-ն հասանելի են միայն Քարտապանին և Քարտապանը կրում է դրանց պահպանման և այլ անձանց հասանելի չդարձնելու ողջ պատասխանատվությունը: Քարտապանը նման փաստ հայտնաբերելու դեպքում պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում կապ հաստատել Բանկի հետ +37410-59-20-19 շուրջօրյա սպասարկման հեռախոսահամարով և կասեցնել(բլոկավորել/արգելափակել) Քարտը օնլայն ռեժիմում:

4.2.6 Մինչև Բանկում Քարտի կասեցումը(բլոկավորումը/արգելափակումը) Քարտով կատարված բոլոր գործարքների պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

4.2.7 Պին-կոդը /PIN/ 3(երեք) անգամ սխալ հավաքելու դեպքում Քարտն ավտոմատ բլոկավորվում է, իսկ ֆիզիկապես Բանկոմատի ներսում գտնվելու դեպքում նաև առգրավվում: Բանկոմատի կողմից Քարտն առգրավվելու դեպքում անմիջապես պետք է դիմել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ +37410-59-20-19 շուրջօրյա սպասարկման հեռախոսահամարով:

4.2.8 Եթե Հաճախորդը Քարտը պատվիրելուց հետո 50 օրացուցային օրվա ընթացքում չի ներկայանում Բանկ Քարտը ստանալու համար, ապա Բանկն իրավունք ունի ոչնչացնել Քարտը և չվերադարձնել գանձված միջնորդավճարները:

4.3 Քարտապանի և Բանկի գործողությունները քարտի կորստի/գողանալու դեպքում.

4.3.1 Քարտի կորստի, գողության, հափշտակության, մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում, Քարտը կասեցնելու (բլոկավորելու) նպատակով, Քարտապանը պարտավոր է անմիջապես այդ մասին տեղեկացնել Բանկին՝ հայտնելով իր Բանկային գաղտնաբառը և կապ հաստատելով հետևյալ ցանկացած եղանակով՝

- Քարտի վրա նշված շուրջօրյա հեռախոսահամարով,
- Հեռակառավարման համակարգով՝ Գործառնական ժամերին,

- այցելություն Բանկի գլխամասային գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ՝ Գործառնական ժամերին, որի արդյունքում Քարտի գործողությունը կասեցվում է:

4.3.2 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանին հասցրած այն վնասի համար, որը, պատճառվել է Քարտը կորցնելու և այդ մասին Բանկին հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում: Բանկը պատասխանատվություն չի կրում այն վնասի համար, որը հասցվել է Քարտապանին՝ Քարտի կորստի, գողության, հափշտակության, մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման, զեղծարարության և Քարտապանի կողմից Քարտի գործողությունը կասեցնելու վերաբերյալ Բանկին հայտնելու միջև ընկած ժամանակահատվածում, ինչպես նաև Քարտապանի կողմից Կանոնների պահանջները չկատարելու հետեւանքով:

Բանկը պատասխանատվություն չի կրում նաև Կանոններով սահմանված իր իրավունքներն իրականացնելու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար:

4.3.3 Նոր Քարտը և Պին-կոդը /PIN/ Բանկը Քարտապանին տրամադրում է վերջինիս կողմից նոր Քարտի պատրաստման ծախսերը Սակագներին համապատասխան Բանկին վճարելուց հետո:

4.4 Քարտերով կատարված գործարքների բողոքարկման կարգը և պայմանները.

4.4.1 Քարտապանի կողմից Քաղվածքում առկա Գործարք(ներ)ի հետ անհամաձայնության դեպքում Քարտապանը կարող է զանգահարել կամ այցելել Բանկի ցանկացած մասնաճյուղ պարզաբանելու համար անհրաժեշտությունը:

4.4.2 Քարտապանը Գործարքի կատարման օրվանից 60(վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում /եթե վճարահաշվարկային համակարգի կանոններով այլ ժամկետ նախատեսված չէ/ կարող է բողոքարկել Քաղվածքում արտացոլված Գործարք(ներ)ը՝ Բանկի կողմից սահմանված ձևով լրացված բողոքարկման դիմումով՝ դրան կցելով իր բողոքը հիմնավորող փաստաթղթերը:

4.4.3 Բանկը վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան կօժանդակի Քարտապանի կողմից բողոքարկվող գործարքի գումարի վերականգնմանը Քարտային հաշվին, սակայն գումարի վերականգնման անհնարինության դեպքում Քարտապանը չի ազատվում Բանկի նկատմամբ ունեցած իր պարտավորություններից:

4.4.4 Եթե Քարտապանի կողմից բողոքարկվող Գործարքը կատարվել է Պին-կոդի /PIN/ կամ 3D Secure կոդի մուտքագրմամբ, Քարտապանը չի կարող գործարքը բողոքարկել որպես զեղծարարական:

4.4.5 Բանկը պատասխանատվություն չի կրում բոլոր այն գործարքների համար, որոնք կատարվել են Քարտապանի անփութության կամ անզգուշության հետևանքով Քարտի կրկնօրինակման կամ Քարտի մագնիսական ժապավենի վրա պարունակվող տեղեկատվության գողացման, պատճենահանման, յուրացման, ապօրինի արտահոսքի և (կամ) կեղծման, CVV կամ CVC օգտագործման, կամ որևէ այլ խարդախության կամ զեղծարարության, անօրինական օգտագործման կամ առանց Քարտապանի թույլտվության Քարտում կամ CVV կամ CVC առկա տեղեկատվությանը ապօրինի տիրանալու կամ համակարգչային կապի կամ հատուկ տեխնիկական միջոցների օգտագործմամբ Քարտով հաղորդվող տեղեկատվությունը որսալու միջոցով:

4.4.6 Քարտապանի բողոքարկման դիմումին ի պատասխան՝ բողոքարկված գործարքների գումարները 90 (իննսուն) օրյա ժամկետում կամ վերականգնվում են Քարտապանի հաշվին կամ Քարտապանին տրամադրվում է գրավոր պատասխան՝ ներկայացնելով բողոքարկման դիմումի մերժման հիմքերը: Քարտապանի բողոքարկման կամ հետգանձման դիմումը կարող է չընդունվել վարույթ՝ ի սկզբանե թերի կամ կասկածելի տվյալների ներկայացման դեպքում: Քարտապանի բողոքարկումը ընդունող աշխատակիցը Քարտապանին ծանուցում է վարույթի իրականացման համար Բանկի կողմից կատարվող ծախսերի փոխհատուցման և միջնորդավճարների մասին:

4.4.7 Քարտապանի կողմից բողոքարկման դիմում ներկայացնելու դեպքում Բանկը պարտավոր է ընդունել այն՝ Քարտապանին տրամադրելով այդ մասին գրավոր հավաստում:

4.4.8 Առանց շփման (contactless) կատարված և Քարտապանի նույնականացում չպահանջող գործարքների վերաբերյալ Քարտապանի կողմից բողոքարկման դիմում ներկայացնելուց հետո Բանկը հատուցում է Քարտապանի հաշվից դեբետագրված միջոցները ոչ ուշ, քան դիմումը ներկայացնելու 5-րդ օրը:

4.5 Քարտերով կատարված գործարքների վերաբերյալ SMS կարճ հաղորդագրությունների միջոցով քարտապաններին տեղեկացման կարգը և պայմանները.

4.5.1 Քարտապանը ծանուցվում է Քարտով կատարած գործարքների վերաբերյալ՝ Դիմում-պայմանագրում նշված բջջային հեռախոսահամարին SMS կարճ հաղորդագրությունների ծառայության միջոցով:

4.5.2 Քարտապանը կարող է հրաժարվել SMS կարճ հաղորդագրությունների ծառայության ակտիվացումից՝ այդ մասին կատարելով նշում Դիմում-պայմանագրի համապատասխան դաշտում:

4.5.3 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի բջջային հեռախոսի կամ բջջային կապի խափանման, հեռահաղորդակցման ծառայություններ մատուցող կազմակերպության մոտ ծագած տեխնիկական

կամ այլ խնդիրներ առաջանալու հետևանքով, Քարտապանի բջջային հեռախոսահամարի փոփոխության (որի մասին պատշաճ չի տեղեկացվել Բանկին), կամ Քարտապանի՝ ռոումինգում գտնվելու ժամանակ Քարտով կատարված Գործարքների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված SMS կարճ հաղորդագրությունը չստանալու համար:

4.5.4 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտով կատարված Գործարքների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին ուղարկված SMS հաղորդագրության բովանդակությունն երրորդ անձանց հայտնի դառնալու համար:

4.5.5 SMS կարճ հաղորդագրության ստացումը/չստացումը չի կարող հիմք հանդիսանալ գործարքի կատարման/չկատարման համար, այն կրում է միայն տեղեկատվական բնույթ: Գործարքը համարվում է հաշվառված/կատարված Քարտապանի Հաշվի քաղվածքում ձևակերպվելուց հետո միայն:

4.5.6 Քարտապանը սույն Պայմանագրի կնքմամբ համաձայնվում է այլ բանկերին պատկանող սպասարկման կետերում կատարված գործարքների փոխհաշվարկների իրականացման ժամանակ օգտագործվող վճարային համակարգերի կողմից սահմանված արտարժույթի փոխարժեքներին, ինչպես նաև Բանկի սպասարկման կետերում գործարքների փոխհաշվարկները իրականացնելու ժամանակ օգտագործվող Բանկի արտարժույթի փոխարժեքներին:

4.5.7 Քարտապանը չի կարող Բանկից պահանջել Գործարքների կատարման և Հաշվին փաստացի հաշվանցման ժամանակահատվածում արտարժութային փոխարժեքների տատանումից առաջացած հնարավոր կորուստների փոխհատուցում:

4.5.8 Այն դեպքում, երբ Բանկը փոխհաշվարկների իրականացման ընթացքում կատարում է բոլոր անհրաժեշտ արտարժութային փոխարկումներ, ապա Գործարքի փաստացի կատարման ամսաթվի և Գործարքի հաշվանցման ամսաթվի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում արտարժութային փոխարժեքների տատանումներից Քարտապանի հնարավոր ֆինանսական կորուստները չեն կարող լինել բողոքարկման առարկա:

4.5.9 Քարտապանի կողմից չթույլատրված կամ նրա կողմից չկատարված լինելու/զեղծարարական/fraud գործարքներ/ պատճառով Գործարքների բողոքարկման դիմում կարող է ներկայացվել բացառապես Քարտապանի կողմից Քարտի վավերապայմանները (ռեկվիզիտները) փոխարինող վերաթողարկում իրականացնելու դիմում կամ Քարտի փակման դիմում ներկայացնելուց հետո:

ԲԱԺԻՆ 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1 **Բանկը պարտավոր է՝**

5.1.1 սույն Կանոններով նախատեսված կարգով ու պայմաններով Քարտապանի համար կատարել տվյալ տեսակի հաշվիների համար օրենքով, դրան համապատասխան սահմանված բանկային կանոններով, բանկային գործունեության մեջ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով, միջազգային պրակտիկայում ընդունված կանոններով, ինչպես նաև սույն Կանոններով նախատեսված գործառնություններ, բացառությամբ չծածկված ակրեդիտիվով հաշվարկների (եթե այլ բան նախատեսված չէ Բանկի և Քարտապանի միջև կնքված առանձին համաձայնագրով).

5.1.2 Հաշվով գործառնություններն իրականացնել սույն Կանոններով և օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով.

5.1.3 առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) Հաշվից դուրս գրել և ընդունել դրամական միջոցներ օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և(կամ) սույն Կանոններով սահմանված դեպքերում.

5.1.4 իր կողմից սահմանված պարբերականությամբ Քարտապանին անվճար տրամադրել Քաղվածքները և դրանց հավելվածները, օրենսդրությամբ, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոններով նշված ժամկետներում և կարգով.

5.1.5 Հաշվի բացման համար Քարտապանի ներկայացրած փաստաթղթերը (լուսային պատճենները) պահպանել ոչ պակաս, քան 5 (հինգ) տարի՝ հաշվված Հաշվի պայմանագիրը լուծելու ամսաթվից: Ընդ որում, Քարտի կիրառման ընթացքում ձևավորված վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի կազմման հիմք հանդիսացող վճարումների գրանցամատյանը կամ էլեկտրոնային մատյանը Բանկում և (կամ) նրան սպասարկող պրոցեսինգային կազմակերպությունում պահպանվում են առնվազն 5 տարի:

5.1.6 Քարտապանին Քարտը տրամադրել առավելագույնը 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշված Դիմում-Պայմանագրի կնքման օրվանից կամ Քարտի գործողության ժամկետը լրանալուց հետո նույն ժամկետում սահմանված կարգով վերաթողարկել Քարտը, եթե Քարտապանն ապահովել է սույն Կանոններով նախատեսված վերաթողարկմանն առնչվող պայմանները:

5.1.7 Քարտից հրաժարվելու դեպքում վերադարձնել Քարտապանին Հաշվի մնացորդը և հաշվարկված (կուտակված) տոկոսագումարը.

5.1.8 ապահովել Քարտի սպասարկումը՝ համաձայն ArCa, MasterCard և Visa International վճարային համակարգերի կողմից ընդունված ստանդարտների և Կանոնների.

5.1.9 սահմանված կարգով ընդունել Քարտապանի կողմից Քարտով կատարված գործարքների բողոքարկման դիմումները և ձեռնարկել բոլոր ընթացակարգերը Քարտապանի շահերը պաշտպանելու համար՝ համաձայն ArCa, MasterCard և Visa International վճարային համակարգերի կողմից ընդունված Կանոնների.

5.1.10 Քարտի կորստի վերաբերյալ Քարտապանից ծանուցում ստանալուց հետո կատարել Քարտի կասեցում(բլոկավորում).

5.1.11 Քարտապանին տեղեկացնել ոչ ստանդարտ իրավիճակների դեպքում Բանկի գործողությունների մասին.

5.1.12 Հաշվին հաշվեգրել տոկոսներ՝ համաձայն Սակագների և իր ներքին իրավական ակտերի.

5.1.13 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել Քարտապանի վերաբերյալ իրեն հայտնի դարձած բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները.

5.1.14 Քարտապանի պահանջով համապատասխան վճարի դիմաց տրամադրել Հաշվի լրացուցիչ քաղվածք՝ համաձայն տվյալ պահին գործող Սակագների.

5.1.15 Եթե Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված է Հաշվով գործառնությունների իրականացման առանձնահատկություններ, ապա՝

- սույն Կանոնների 5.3.1 կետում նշված որոշակի պարտավորություններ կարող են չկատարվել Բանկի կողմից կամ կարող են կատարվել որոշակի առանձնահատկություններով.
- Բանկի վրա կարող են դրվել լրացուցիչ պարտավորություններ:

5.2 Քարտապանը պարտավոր է՝

5.2.1 Հաշվի բացման համար Բանկին ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ Բանկի սահմանած ցանկին համապատասխան, ինչպես նաև Բանկին տրամադրել իր կամ իր լիազորված անձի մասին հավաստի տեղեկություններ.

5.2.2 Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինել օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և սույն Կանոնների պահանջներին համապատասխան.

5.2.3 ապահովել վճարահաշվարկային և այլ փաստաթղթերի, այլ կարգադրությունների ճիշտ ձևակերպումները օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և սույն Կանոնների պահանջներին համապատասխան, և դրանք ներկայացնել Բանկին Գործառնական օրվա ընթացքում առձեռն կամ Հեռակառավարման համակարգերի միջոցով.

5.2.4 օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կամ սույն Կանոններով սահմանված կարգով ու ժամկետներում Բանկ ներկայացնել վճարողի համաձայնությամբ վճարահաշվարկային փաստաթղթերով Հաշվից դրամական միջոցներ վճարելու համաձայնություն տալու կամ վճարումը մերժելու վերաբերյալ տեղեկություններ.

5.2.5 Հաշվով գործառնությունների համապատասխանությունը օրենսդրության և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև արժութային կագավորման և արժութային վերահսկողության մասին, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքների պահանջներին ստուգելու համար ժամանակին Բանկ ներկայացնել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները.

5.2.6 սույն Կանոններով և Սակագներով նախատեսված կարգով ու ժամկետներում Բանկին վճարել Քարտով/Հաշվով գործառնություններ կատարելու համար միջնորդավճարները, ինչպես նաև հատուցել Բանկի կրած ծախսերը, որոնք կապված են Քարտապանի հանձնարարությունները կատարելու, այդ թվում Բանկի այլ սակագներով Քարտապանի Հաշիվը և(կամ) Քարտը սպասարկելու հետ.

5.2.7 Հաշվի Քաղվածքների և Հաշվով կատարված գործառնությունների հետ առարկությունների դեպքում գրավոր առարկություններ ներկայացնել Բանկին Հաշվի Քաղվածքն ստանալուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում.

5.2.8 հետ վերադարձնել Բանկի կողմից սխալմամբ Հաշվին մուտքագրված դրամական միջոցները՝ այն փոխանցելով Բանկի (Բանկի տարածքային ստորաբաժանման) այն հաշվին, որից այդ դրամական միջոցները մուտքագրվել են Հաշվին, կամ փոխանցել Բանկի պահանջագրում նշված վավերապայմաններով ոչ ուշ քան, 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այն պահից, երբ հայտնաբերվել է սխալ մուտքագրման փաստը կամ ստացել է դրա վերաբերյալ Բանկի գրավոր պահանջագիրը.

5.2.9 եթե Հաշվում առկա դրամական միջոցները բավարար չեն սույն Կանոնների 3.16 կետին համապատասխան անակցեպտ կարգով առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու համար, ապա դրա վերաբերյալ Բանկի գրավոր ծանուցումն

ստանալուց հետո 2(երկու) աշխատանքային օրվա ընթացքում Բանկին վճարել Սակագներով նախատեսված միջնորդավճարները և գրավոր ծանուցման մեջ նշված վավերապայմաններով փոխանցել Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները.

5.2.10 **[Կիրառելի է իրավաբանական անձի դեպքում]** Բանկ ներկայացնել ֆիրմային անվանման, վերակազմակերպման, իրավաբանական հասցեի, գտնվելու վայրի, կնիքի (առկայության դեպքում), Հաշվով գործառնություններ իրականացնելու իրավասություններ ունեցող անձանց կազմում կատարված փոփոխությունների վերաբերյալ պատշաճ ձևակերպված փաստաթղթերը Բանկին ներկայացնել ոչ ուշ, քան 5(հինգ) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվված այդ փոփոխությունների կատարման(գրանցման) և(կամ) դրանց վերաբերյալ որոշումների ընդունման ամսաթվից.

5.2.11 Հաշվի պայմանագիրը կնքելիս Բանկին ներկայացնել կապի արժանահավատ տեղեկություններ (հեռախոսի և(կամ) ֆաքսի համար, էլեկտրոնային փոստի հասցե, փոստային հասցե, այլ տեղեկություններ), ինչպես նաև փաստացի բնակության/գտնվելու վայրի (եթե այն տարբերվում է Քարտապանի բնակության/հիմնադիր փաստաթղթերում առկա գտնվելու վայրից) վերաբերյալ տեղեկություններ, իսկ դրանցում փոփոխություններ կատարվելու դեպքում անհապաղ Բանկին տրամադրել կապի թարմացված տեղեկություններ.

5.2.12 ինկասո հաշվարկների դեպքում ժամանակին գրավոր պատասխանել դրամական միջոցներ ստացողի իրավունքների հաստատման մասին Բանկի հարցումներին.

5.2.13 պատշաճ կարգով կատարել Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) Հաշվով գործառնություններն առանձնահատկություններով սպասարկելու համար նախատեսված լրացուցիչ պարտավորությունները.

5.2.14 Բանկին տրամադրած տեղեկությունների ցանկացած փոփոխության դեպքում տեղեկացնել Բանկին.

5.2.15 ժամանակին կատարել միջնորդավճարների և վերոհիշյալ գումարների ուշացման և/կամ չմարման դիմաց հաշվարկված տոկոսների և տույժերի վճարումները, համաձայն Բանկում գործող Սակագների.

5.2.16 վճարել Բանկին Քարտի և Հաշվի սպասարկման հետ կապված բոլոր վճարներն ու տուժանքը, որոնք բխում են սույն Պայմանագրից, Սակագներից և Կանոններից.

5.2.17 դրամական միջոցների գերածախս առաջանալու դեպքում մեկ ամսվա ընթացքում մարել առաջացած գերածախսի գումարը և դրա գծով հաշվարկված տուժանքը.

5.2.18 տասը օրվա ընթացքում Բանկին տեղեկացնել հեռախոսահամարի, աշխատանքի, բնակության վայրի և նախկինում տրամադրված այլ տեղեկությունների փոփոխությունների մասին.

5.2.19 Գործարքների իրականացման ժամանակ սպասարկող աշխատակցի պահանջով ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ.

5.2.20 առևտրի/սպասարկման կետերում գնված ապրանքների/մատուցված ծառայությունների որակից դժգոհ լինելու և(կամ) ընդհանրապես ապրանքները/ծառայությունները չստանալու դեպքում նախևառաջ համապատասխան կետից պահանջել պատշաճ որակի ապրանքի/ծառայության տրամադրում և միայն դրանից հետո դիմել Բանկին վճարված գումարի բողոքարկման գործընթաց սկսելու համար.

5.2.21 խստորեն հետևել Կանոններին և պահպանել սույն Պայմանագրի պայմանները:

5.2.22 Պահպանել Քարտի անվտանգ օգտագործման հետևյալ նվազագույն պայմանները.

5.2.22.1 Քարտը ստանալու պահին վճարել Քարտի տրամադրման և սպասարկման մեկ տարվա վարձավճարը և Հաշվին մուտքագրել Բանկի Սակագներով նախատեսված չնվազող մնացորդը.

5.2.22.2 Քարտը ստանալուն պես անմիջապես ստորագրել Բանկի կողմից ներկայացված համապատասխան փաստաթղթերում Քարտը և Պին-կոդը /PIN/ ստանալու վերաբերյալ (Պին-կոդը /PIN/ sms-ով ստանալու դեպքում՝ չի պահանջվում), ինչպես նաև Քարտի դարձերեսի վրա նախատեսված հատուկ դաշտում և հետագայում զերծ պահել այն երրորդ անձանց կողմից օգտագործվելուց՝ Քարտը և Պին-կոդը /PIN/ մշտապես պահելով իր անմիջական տիրապետման և օգտագործման ներքո.

5.2.22.3 Չտրամադրել Քարտը և (կամ) Պին-կոդը /PIN/ երրորդ անձանց, այդ թվում՝ բարեկամներին, ծանոթներին, ֆինանսական կազմակերպության գանձապահներին կամ այլ անձանց, ովքեր ցանկություն են հայտնել օգնել Քարտապանին՝ Քարտը օգտագործելու ժամանակ, իսկ տրամադրելու դեպքում պատասխանատվություն կրել Քարտով կատարված Գործարքների և գործառնությունների համար: ՄԻԱՅՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԻ ՎՐԱ ՆՇՎԱԾ ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆԸ ԿՐՈՂ ԱՆՁՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՎՅԱԼ ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԸ:

5.2.22.4 Հիշել Պին-կոդը /PIN/, իսկ, եթե հնարավոր չէ հիշել, ապա պահել այն Քարտից առանձին՝ երրորդ անձանց համար անհասանելի տեղում.

5.2.22.5 Ստորագրել Քարտի դարձերեսում, եթե տվյալ տեսակի Քարտի համար նախատեսված է ստորագրության դաշտ.

5.2.22.6 Քարտի կորստի դեպքում այդ մասին անմիջապես հայտնել Բանկ՝ Քարտի վրա նշված հեռախոսահամարներով (+37410) 592019)՝հայտնելով Բանկային գաղտնաբառը: Տեղեկացման

պահից կասեցվում է Քարտի գործողությունը օնլայն ռեժիմում: Քարտի գործողությունը վերականգնելու/ապաբլոկավորելու համար Քարտապանը պետք է Բանկ ներկայացնի գրավոր դիմում այդ մասին՝ այցելելով Սպասարկող ստորաբաժանում կամ ուղարկի դիմումը Հեռակառավարման համակարգերի միջոցով՝ համապատասխան հաշվին նախապես ապահովելով Սակագնով սահմանված միջնորդավճարը

5.2.22.7 ժամկետանց կամ անվավեր ճանաչված Քարտը վերադարձնել Բանկ.

5.2.22.8 չօգտագործել Քարտը փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման և օրենքով արգելված այլ գործունեություն իրականացնելու համար.

5.2.22.9 իրականացնել Գործարքներ միայն Հաշվի հասանելի մնացորդի, կանխիկացման և վճարային սահմանաչափերի սահմաններում.

5.2.22.10 Քարտի գործողության դադարեցման դեպքում տասը օրվա ընթացքում այն հանձնել Բանկին.

5.2.22.11 նախկինում կորած Քարտը գտնվելու դեպքում վերադարձնել այն Բանկին.

5.2.22.12 Քարտի կորստի կամ նրա վավերապայմանների (ռեկվիզիտների) և(կամ) Պին-կոդը /PIN/ այլ անձանց հասանելի դառնալու կասկած ունենալու դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել Բանկին և կատարել Քարտի կասեցում(բլոկավորում).

5.2.22.13 ստանձնել ֆինանսական պատասխանատվություն Քարտով կատարված չթույլատրված և(կամ) չիրականացված բոլոր գործարքների համար, եթե չի իրականացվել Քարտի կասեցում (բլոկավորում).

5.2.22.14 եթե բողոքարկման գործընթացի արդյունքում պարզվում է, որ գործարքը կատարվել է Քարտապանի կողմից կամ Քարտապանի կողմից քարտի օգտագործման կանոնների խախտման հետևանքով, Բանկի պահանջով փոխհատուցել բողոքարկվող գումարի հետգանձման հետ կապված Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարները.

5.2.22.15 պահպանել Քարտով իրականացված գործարքների արդյունքում տրամադրված անդորրագրերը/նամակագրությունը/փաստաթղթերը և բողոքարկման վերլուծության ընթացքում Բանկի պահանջով ներկայացնել դրանք.

5.2.22.16 ուշադրություն դարձնել Քարտի պահպանման և օգտագործման կանոններին, Քարտը չենթարկել մեխանիկական, ջերմային և էլեկտրամագնիսական ազդեցության, խուսափել խոնավության ազդեցությունից: Չպահել Քարտը բջջային հեռախոսի, կենցաղային և գրասենյակային տեխնիկայի հետ միասին:

5.2.22.17 Քարտային հաշվին առկա ողջ գումարը կորցնելու ռիսկից և Քարտապանի կողմից չվավերացված գործարք(ներ)ից խուսափելու համար պահպանել սահմանված կանխիկացման գործարքների օրական սահմանաչափը, միաժամանակ բաժանորդագրվել կատարված գործարքների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով տեղեկացման ծառայությանը (օրինակ՝ SMS կարճ հաղորդագրության միջոցով կամ այլ եղանակով տեղեկացում).

5.2.22.18 Չպատասխանել էլեկտրոնային նամակներին կամ այլ եղանակով ստացած հարցումներին, այդ թվում՝ Բանկի կողմից ուղարկված, համաձայն որոնց անհրաժեշտ է տրամադրել Քարտի վերաբերյալ տեղեկատվություն՝ այդ թվում Պին-կոդ /PIN/: Հետևել էլեկտրոնային նամակներում արված հղումներին: Նման հարցումներ ստանալու դեպքում անմիջապես տեղեկացնել Բանկին արագ արձագանքելու ահազանգման շուրջօրյա (7/24) համակարգի միջոցով կամ սույն Կանոններով նշված Բանկի ցանկացած այլ հեռախոսահամարներով:

5.2.22.19 Քարտը կորցնելու կամ գողացված կամ այլ կերպ հափշտակված լինելու և (կամ) երրորդ անձանց կողմից Քարտի տվյալները, Պին-կոդը /PIN/ բացահայտելու արդյունքում Քարտապանը կարող է կրել իր կողմից չհավաստագրված (չարտոնված) գործարք(ներ) ունենալու ռիսկ:

5.2.22.20 Քարտը կորցնելու կամ գողացված կամ այլ կերպ հափշտակված լինելու և երրորդ անձանց կողմից Քարտի տվյալները (կամ) Պին-կոդը /PIN/ բացահայտված լինելու վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում անհապաղ դիմել Բանկին և հետևել վերջինիս աշխատակցի կողմից տրված հրահանգներին: Նախքան այդ մասին Բանկին տեղեկացնելը Քարտապանը կրում է իր կողմից չհավաստագրված (չարտոնված) գործարք(ներ) ունենալու ռիսկը, բացառությամբ առանց Քարտապանի նույնականացման իրականացված գործարքների:

5.2.22.21 չօգտվել սարքավորումներից, որոնք պահանջում են Պին-կոդի /PIN/ մուտքագրում՝ Բանկոմատի տեղադրման վայր մուտք գործելու նպատակով.

5.2.22.22 ցանկալի չէ օգտվել Բանկոմատից, եթե այն շրջապատված է մարդկանց բազմությամբ, հնարավորության դեպքում անհրաժեշտ է ընտրել ավելի հարմար պահ Բանկոմատից օգտվելու համար կամ փնտրել այլ բանկոմատ.

5.2.22.23 ցանկալի չէ օգտվել այն բանկոմատներից, կանխիկացման և առևտրի/սպասարման կետերից և սարքավորումներից, որոնք Քարտապանի կարծիքով վստահելի չեն կամ կասկած են առաջացնում, ինչպես նաև այն դեպքում, երբ Քարտ ընթերցող սարքին, ստեղնաշարին կամ կանխիկի

տրամադրման պատուհանին միացված են լրացուցիչ սարքավորումներ, հաղորդալարեր, կպչուն ժապավեններ և այլ կասկածելի իրեր.

5.2.22.24 ֆիզիկական ուժ չգործադրել Քարտը Բանկոմատ մուտքագրելու համար, եթե Քարտը հնարավոր չէ մուտքագրել անհրաժեշտ է հրաժարվել տվյալ Բանկոմատից օգտվելուց.

5.2.22.25 Պին-կոդի /PIN/ մուտքագրելուց հետևել, որպեսզի մոտակայքում գտնվող մարդկանց համար այն տեսանելի չլինի, Պին-կոդի /PIN/ մուտքագրելիս անհրաժեշտ է ձեռքով ծածկել ստեղնաշարը.

5.2.22.26 Բանկոմատի աշխատանքը կասկածելի թվալու դեպքում հրաժարվել տվյալ բանկոմատից օգտվելուց, չեղարկել ընթացիկ գործարքը՝ սեղմելով «Չեղարկել» կոճակը և վերցնել Քարտը.

5.2.22.27 կանխիկ գումարը Բանկոմատից ստանալուց հետո հաշվել այն Բանկոմատի դիմաց, համոզվել, որ Քարտը վերադարձվել է և վերցնել անդորրագիրը.

5.2.22.28 պահպանել Բանկոմատից տրամադրած անդորրագրերը՝ հետագայում Քաղվածքի հետ համեմատելու նպատակով.

5.2.22.29 չդիմել երրորդ անձանց օգնությանը Բանկոմատով գործարքներ կատարելիս.

5.2.22.30 եթե Բանկոմատով գործարք կատարելիս Բանկոմատը չի վերադարձնում Քարտը, զանգահարել Բանկին, հայտնել այդ մասին և հետևել Բանկի աշխատակցի ցուցումներին.

5.2.22.31 չօգտվել կասկած հարուցող առևտրի և կամ ծառայությունների մատուցման կետերից.

5.2.22.32 պահանջել Քարտով գործարք կատարել բացառապես Քարտապանի ներկայությամբ,որը անհրաժեշտ է Քարտի վրա առկա տվյալները երրորդ անձանց հայտնի դառնալու ռիսկը նվազեցնելու համար:

5.2.22.33 Քարտով վճարումներ կատարելիս Քարտապանից կարող է պահանջվել ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, ստորագրել անդորրագիրը կամ մուտքագրել Պին-կոդը /PIN/: Պին-կոդը /PIN/ մուտքագրելիս անհրաժեշտ է ապահովել, որպեսզի այն տեսանելի չլինի երրորդ անձանց: Նախքան անդորրագիրը ստորագրելը համոզվել, որ գումարը համապատասխանում է ձեռքբերվող ապրանքի կամ ծառայություն դիմաց պահանջվող գումարին:

5.2.22.34 Քարտով վճարում կատարելիս գործարքի մերժում տեղի ունենալու դեպքում պահպանել անդորրագրի օրինակը՝ հետագայում տվյալ գործարքը քաղվածքում արտացոլված չլինելու փաստը ստուգելու համար.

5.2.22.35 չմուտքագրել Պին-կոդը /PIN/ ինտերնետ միջավայրում ապրանքներ ձեռքբերելիս կամ մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ կատարելիս, ինչպես նաև չհայտնել այն հեռախոսով/ֆաքսով.

5.2.22.36 չտրամադրել անձնական տվյալներ կամ Քարտի, Հաշվի վերաբերյալ տեղեկատվություն ինտերնետ կապի միջոցով, օրինակ՝ Պին-կոդ /PIN/, բանկային ծառայություններից օգտվելու անձնական կոդեր, Քարտի գործողության ժամկետի, վարկային սահմանաչափի, գործարքների պատմության վերաբերյալ և այլ անձնական տեղեկատվություն.

5.2.22.37 Ինտերնետ միջավայրում Գործարք կատարել միայն այն ինտերնետային կայքերում, որոնց հասցեն սկսվում է “https” հապավմամբ, պարունակում է Secure Sockets Layer (SSL), 3D Secure սերտիֆիկատ կամ ունի քարտապանի նույնականացման որևէ այլ մեթոդ, այլապես Բանկը պատասխանատվություն չի կրում պատճառված վնասների համար: Նախքան ինտերնետ կայքից օգտվելը, հնարավորության դեպքում համոզվել կայքի հասցեի ճիշտ լինելու մեջ, քանի որ նման հասցեները կարող են լինել կեղծ և անօրինական օգտագործվել:

5.2.22.38 Հաշվին առկա ողջ գումարը կորցնելու ռիսկից և Քարտապանի կողմից չվավերացված (չարտոնված) գործարքից խուսափելու համար նպատակահարմար է ինտերնետ միջավայրում ապրանքներ ձեռքբերելիս կամ մատուցվող ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու համար ունենալ առանձին վճարային քարտ, որը նախատեսված կլինի բացառապես ինտերնետ միջավայրում օգտագործման համար.

5.2.22.39 Հնարավորության դեպքում անհրաժեշտ է գնումներ կատարել անձնական համակարգչից՝ անձնական տվյալների և Քարտի վերաբերյալ տեղեկատվության գաղտնիությունը ապահովելու նպատակով: Այն դեպքում, երբ գնումները կատարվում են այլ անձին պատկանող համակարգչից խորհուրդ է տրվում չհիշել անձնական կամ գաղտնի համարվող այլ տվյալները այդ համակարգչում, իսկ գործարքը կատարելուց հետո անհրաժեշտ է համոզվել, որ անձնական կամ գաղտնի համարվող այլ տվյալները չեն պահպանվել տվյալ համակարգչում՝ կրկին մուտք գործելով վաճառողի կայք, որից գնումներ էին կատարվել:

5.2.22.40 Ինտերնետ միջավայրում գնումներ կատարելու համար նախատեսված համակարգչի վրա անհրաժեշտ է տեղադրել հակավիրուսային համակարգ և պարբերաբար թարմացնել այն, ինչը հնարավորություն կտա պաշտպանել համակարգիչ վնասակար ծրագրերի ներթափանցումը և անձնական և բանկային տվյալներ հափշտակելը:

ԲԱԺԻՆ 6. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

6.1 Բանկն իրավունք ունի՝

6.1.1 օգտագործել Քարտապանի հաշվում եղած դրամական միջոցները՝ երաշխավորելով այդ միջոցներն անարգել տնօրինելու Քարտապանի իրավունքը.

6.1.2 օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով և դեպքերում միակողմանիորեն փոփոխել Հաշվի համարը.

6.1.3 մերժել Քարտապանի Հաշվով գործառնությունների կատարումը այն դեպքերում, երբ՝

ա) առկա են փաստեր, որոնք վկայում են Քարտապանի կողմից վճարահաշվարկային փաստաթղթերի ձևակերպումները կարգավորող օրենսդրության, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի և բանկային կանոնների պահանջների և դրանք Բանկ ներկայացնելու ժամկետների խախտման մասին.

բ) Քարտապանը Բանկին չի ներկայացրել գործող օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով, այդ թվում արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին օրենսդրությամբ սահմանված Հաշվով գործառնությունների իրականացնելու հիմք հանդիսացող փաստաթղթերը, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են Բանկի կողմից հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը (փողերի լվացում) և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելելու նպատակով փաստաթղթային հաշվառման համար.

գ) **[Կիրառելի է իրավաբանական անձի և անհատ ձեռնարկատիրոջ դեպքում]** Քարտապանը ներկայացրել է այնպիսի վճարահաշվարկային և այլ փաստաթղթեր, որոնցում առկա ստորագրությունները և(կամ) կնիքի դրոշմը կասկածներ է հարուցում.

դ) Հաշվում առկա դրամական միջոցները բավարար չեն Քարտապանի ներկայացրած վճարահաշվարկային փաստաթղթերի կամ այլ կարգադրությունների կատարման համար, այդ թվում տվյալ գործառնության համար Բանկի կողմից գանձվող միջնորդավճար հաշվառմամբ, կամ անհնար է թեկուզ մասնակի կատարել վճարահաշվարկային փաստաթղթի կամ Քարտապանի այլ կարգադրությունները.

ե) օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում առկա են Հաշվում առկա դրամական միջոցները տնօրինելու Քարտապանի իրավունքների սահմանափակումներ.

զ) Քարտապանը չի պահպանել կանխիկ դրամական միջոցներ ստանալու համար նախնական հայտեր և հաստատող փաստաթղթեր ներկայացնելու Բանկի կողմից նախատեսված կարգը.

է) Կողմերի միջև կնքված առանձին համաձայնագրով (պայմանագրով) նախատեսված այլ դեպքերում.

6.1.4 միակողմանիորեն փոփոխել Քարտերի տրամադրման և սպասարկման պայմաններն ու Սակագները, Քարտապանի վճարահաշվարկային սպասարկման այն սակագները, որոնք կապված են Հաշվի սպասարկման ու դրանով գործառնությունների վարման հետ, միջնորդավճարների նոր դրույքներ սահմանելու, փոփոխելու և(կամ) վերացնելու և(կամ) Հաշվի սպասարկման ու վարման, այդ թվում Հաշվով գործառնությունների կատարման հետ կապված Բանկի կողմից մատուցվող ծառայությունների նոր տեսակներ նախատեսելու միջոցով, ոչ ուշ քան այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց 15 (տասնհինգ) օր առաջ Դիմում-պայմանագրում ֆիզիկական անձ քարտապանի ընտրած եղանակով, իսկ անհատ ձեռնարկատեր և իրավաբանական անձ քարտապանին՝ սույն Կանոնների 2.16 կետում նշված եղանակներից մեկով ծանուցելու միջոցով.

6.1.5 անակցեպտ կարգով՝ առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության), Բանկի և(կամ) երրորդ անձանց պահանջներով (կարգադրություններով) Հաշվից դուրս գրել դրամական միջոցներ, այդ թվում՝ Քարտի տարեկան սպասարկման վարձավճարը և սպասարկման համար միջնորդավճարները սույն Պայմանագրով կամ օրենդրությամբ սահմանված կարգով, դեպքերում և ժամկետներում, ինչպես նաև Բանկի հանդեպ ստանձնած պարտավորությունները մարելու համար, անկախ այն հանգամանքից, թե այդ պարտավորությունները ծագել են սույն Պայմանագրից, թե այլ պայմանագրերից (գործարքներից), մասնավորապես, Հաշվից գանձել՝

(ա) Հաշվին սխալմամբ մուտքագրված դրամական միջոցները.

(բ) սույն Պայմանագրով, Սակագներով և Կանոններով նախատեսված վճարները, միջնորդավճարները և տուժանքը.

(գ) օրենքով նախատեսված դեպքերում Քարտապանից բռնագանձման ենթակա գումարները՝ համաձայն իրավասու պետական մարմինների/անձանց կայացրած որոշումների.

(դ) Հաշվի նվազագույն մնացորդի համալրման համար անհրաժեշտ դրամական միջոցները.

(ե) Քարտի միջոցով կատարված գործարքների գումարները՝ վճարային համակարգերից ստացված փոխհաշվարկային փաստաթղթերի հիման վրա.

(զ) սույն Պայմանագրի և Կանոնների խախտումներով իրականացված գործարքների գումարները.

(է) իր հանդեպ Քարտապանի չկատարված պարտավորությունների կատարմանն ուղղված ծախսերը.

(ը) պրեմիում սեգմենտի Քարտերի (Gold, Platinum, Infinite, World Elite,) օգտագործման հետ կապված լրացուցիչ այն ծառայություններից օգտվելու վճարները, որոնք ներառված չեն Քարտի սպասարկման վճարների մեջ.

(թ) Բանկի կողմից տրամադրված ցանկացած ոչ վճարային հավելյալ գործիքով ծառայություններից օգտվելու, ակումբներին անդամակցելու վճարները՝ ծառայություն մատուցողի կողմից Բանկին ներկայացված վճարման պահանջի հիման վրա:

6.1.6 անակցեպտ կարգով առանց Քարտապանի լրացուցիչ կարգադրության (համաձայնության) փոխարկել Հաշվում առկա դրամական միջոցները այն գումարով, որոնք անհրաժեշտ են Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած Հաշվի արժույթից տարբերվող արժույթով պարտավորությունները կատարելու համար, և փոխարկման արդյունքում ստացված դրամական միջոցներն ուղղել Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած պարտավորությունների կատարմանը, ընդ որում, փոխարկումն իրականացվում է գործարքի կատարման պահին Բանկի սահմանած արտարժույթի առքի կամ վաճառքի փոխարժեքներով, եթե փոխարկման այլ փոխարժեքներ նախատեսված չեն լինի Կողմերի միջև կնքված պայմանագրով (համաձայնագրով) Բանկի հանդեպ Քարտապանի ստանձնած պարտավորությունների կատարման համար.

6.1.7 Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կամ սույն Կանոններով նախատեսված դեպքերում Քարտապանին ներկայացնել Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու վերաբերյալ պահանջագրեր (կարգադրություններ).

6.1.8 միակողմանիորեն փոփոխել և լրացնել սույն Կանոնները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատել սույն Կանոնները, Հավելվածները, դրանց մասին Քարտապանին ծանուցելով սույն Կանոնների 10.2 կետին համապատասխան.

6.1.9 կասեցնել(բլոկավորել) Քարտապանի Քարտով/Հաշվով գործառնությունները և միջոցներ ձեռնարկել Քարտապանի կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերություններն ու գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով.

6.1.10 սույն Պայմանագրի պայմանների խախտման դեպքում լուծել Պայմանագիրը՝ 20 աշխատանքային օր առաջ այդ մասին տեղեկացնելով Քարտապանին.

6.1.11 Քարտի անօրինական տիրապետման մասին հիմնավոր կասկած ունենալու դեպքում դադարեցնել Քարտի գործողությունը՝ կապ հաստատելով Քարտապանի հետ Գործարքների մասին անհրաժեշտ պարզաբանումներ ստանալու նպատակով.

6.1.12 ցանկացած օրինական եղանակներով ստուգել Քարտապանի վճարունակությունն ու սույն Պայմանագրից և Կանոններից բխող պարտավորությունների պատշաճ կատարման համար մշակել, ներառյալ՝ հավաքել, ամրագրել, մուտքագրել, պահպանել և օգտագործել Քարտապանի անձնական տվյալները.

6.1.13 Քարտապանի կողմից սույն Պայմանագրի պայմանների և(կամ) Կանոնների խախտման դեպքում կասեցնել(բլոկավորել) Քարտը և առանց Քարտապանին ծանուցման մարել Քարտի գծով առաջացած ժամկետանց պարտավորությունները Բանկում բացված Քարտապանի ցանկացած հաշիվներից (ավանդային, բանկային հաշիվներ և այլն), իսկ դրանց անբավարարության դեպքում ձեռնարկել Քարտապանի պարտքերի մարմանն ուղղված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված միջոցներ.

6.1.14 դրամական միջոցների գերածախս առաջանալու դեպքում և այն Քարտապանի կողմից ժամանակին չմարելու (չվերադարձնելու) դեպքում կասեցնել(բլոկավորել) Քարտը և առանց Քարտապանի լրացուցիչ հանձնարարությունների անակցեպտ կարգով գանձել անհրաժեշտ գումարը Հաշվի նվազագույն մնացորդից՝ համաձայն Սակագների կատարելով տուժանքի հաշվեգրում.

6.1.15 փոխհաշվարկներ իրականացնելիս կատարել բոլոր անհրաժեշտ արտարժութային փոխարկումները.

6.1.16 Քարտապանին չվերադարձնել Քարտի սպասարկման միջնորդավճարը, եթե Քարտապանը գրավոր հրաժարվել է Քարտից Դիմում-պայմանագիրը կնքելուց 7 (յոթ) աշխատանքային օր հետո:

6.2 Քարտապանն իրավունք ունի՝

6.2.1 տնօրինել Հաշվում առկա դրամական միջոցները, այդ թվում գործող օրենսդրությանը և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան Հաշվից ստանալ կանխիկ դրամական միջոցներ սույն Կանոններով նախատեսված կարգով, իսկ Բանկի կողմից Հաշվի վարկավորման՝ օվերդրաֆտ տրամադրելու, դեպքերում տնօրինել դրամական միջոցները Կողմերի միջև կնքված Հաշվի վարկավորման (օվերդրաֆտի) պայմանագրով և սույն Կանոններով նախատեսված կարգով և դեպքերում.

6.2.2 ինքնուրույն ընտրել օրենսդրությամբ և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված անկանխիկ հաշվարկների ձևերը.

6.2.3 սահմանված կարգով ստանալ Հաշվի Քաղվածքներ (տեղեկություններ), Հաշվով կատարված գործառնությունների վերաբերյալ այլ փաստաթղթեր, դրանց համար Սակագներով և այլ փաստաթղթերով նախատեսված չափերով Բանկի կատարած ծախսերի հատուցմամբ.

6.2.4 բանկային գործառնությունների, հաշվարկների իրականացման, ինչպես նաև Հաշվի պայմանագրի հետ անմիջականորեն կապված հարցերով Բանկում ստանալ անհատույց խորհրդատվություն.

6.2.5 կարգադրել Բանկին իր Հաշվից դրամական միջոցներ դուրս գրել երրորդ անձանց պահանջով՝ կապված այդ անձանց հանդեպ իր պարտավորությունների կատարման հետ.

6.2.6 Հաշվին միջոցներ մուտքագրել ինչպես անձամբ, այնպես էլ իր հանձնարարությամբ՝ երրորդ անձի միջոցով, անկանխիկ կամ կանխիկ, Բանկում կամ Բանկի ցանկացած մասնաճյուղում, ինչպես նաև այլ բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով.

6.2.7 Գործարքի մերժման դեպքում պահանջել մերժման պատճառը,

6.2.8 Քարտի գործողությունը դադարելու, Քարտի կորստի, վնասման, Պին-կոդը /PIN/ մոռանալու կամ այլ դեպքերում Հաշվին առկա դրամական միջոցները, ներառյալ չնվազող մնացորդը կանխիկ ստանալ Բանկից՝ վճարելով Սակագներով Հաշվից գումարի կանխիկացման համար նախատեսված վճարը և սահմանված ձևով փակման դիմում ներկայացնելով.

6.2.9 բողոքարկել գործարքը՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով դրա համար անհրաժեշտ հիմքեր (անդորրագրեր, չեկեր, հաշվից քաղվածքներ և այլն).

6.2.10 Բանկից պահանջել և ստանալ լրացուցիչ Քաղվածք՝ վճարելով Սակագներով նախատեսված վճարը.

6.2.11 ցանկացած ժամանակ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին 20 աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով Բանկին և մարելով առկա պարտավորությունները.

6.2.12 օգտագործել Քարտը որպես վճարային միջոց գործարքներ կատարելու համար.

6.2.13 դիմել Բանկին իր և երրորդ անձանց անունով Կցված քարտեր ստանալու համար.

6.2.14 բանավոր/գրավոր հանձնարարել Բանկին կասեցնել(բլոկավորել) Քարտը՝ բանավոր ներկայացնելու դեպքում Քարտի գաղտնաբառի օգտագործմամբ, և(կամ) ապակասեցնել(ապաբլոկավորել) Քարտը՝ գրավոր դիմում ներկայացնելու միջոցով.

6.2.15 հիմնավոր պատճառներով և ArCa, MasterCard կամ Visa International վճարային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկել Քաղվածքում արտացոլված ցանկացած գործարք՝ Բանկի կողմից սահմանված ձևով գրավոր բողոքարկում ներկայացնելով Բանկ՝ Քաղվածքում արտացոլված գործարքի հաշվանցման օրվանից ոչ ուշ, քան 60(վաթսուն) օրացույցային օրվա ընթացքում:

6.3 Քարտապանը հանձնարարում է Բանկին՝

6.3.1 Սույնով Քարտապանը տալիս է իր համաձայնությունն առ այն, որպեսզի Բանկն իր վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրի վարկային բյուրոներին, ըստ անհրաժեշտության նաև վճարահաշվարկային համակարգերին կամ վերջիններիս գործակալներին:

6.3.2 Սույնով Քարտապանը տալիս է իր համաձայնությունն առ այն, որպեսզի Բանկի կողմից հարցում կատարվի ՀՀ տարածքում գործող վարկային բյուրոներին և վերջիններիս խնդրում է Բանկին տրամադրել իր ներկա և անցյալ ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև այլ տվյալներ:

Ինչպես նաև սույնով Քարտապանը տալիս է իր համաձայնությունն առ այն, որպեսզի Բանկի կողմից սույն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում ցանկացած պահի, առանց իրեն նախապես տեղյակ պահելու, վարկային բյուրոները և Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրը Բանկին տրամադրեն իր ապագա ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև այլ տվյալներ:

6.4 Եթե Հավելվածներով նախատեսված է Հաշվով գործառնություններ իրականացնելու առանձնահատկություններ, ապա դրանցով Կողմերը կարող են ունենալ լրացուցիչ իրավունքներ:

ԲԱԺԻՆ 7. ՏՈԿՈՍՆԵՐԻ ՀԱՇՎԵԳՐՈՒՄԸ

7.1 Քարտապանի Հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար Բանկը տոկոսներ է հաշվարկում և վճարում՝ Սակագներով նախատեսված չափով:

Քարտապանի Հաշվում եղած դրամական միջոցներն օգտագործելու համար հաշվարկված (կուտակված) տոկոսագումարները Հաշվին մուտքագրվում է ամսական կտրվածքով՝ յուրաքանչյուր օրացուցային ամսվա վերջին օրը:

7.2 Բանկի կողմից ոչ ռեզիդենտ քարտապաններին վճարված եկամուտների հարկումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԲԱԺԻՆ 8. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հաշվի պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

8.2 Սույն Կանոններով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության (արտակարգ և անկանխելի հանգամանքների) արդյունք, որը ծագել է Հաշվի պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Հաշվի պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցությունը շարունակվում է 1(մեկ) ամսից ավելի, ապա Կողմերը պարտավոր են միմյանց միջև համաձայնեցնել (պայմանավորվել) հետագա գործողությունների մասին, այդ թվում՝ Հաշվի պայմանագիրը լուծելու իրենց մտադրությունների մասին:

8.3 Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով սույն Կանոններով ստանձնած պարտավորությունները չկատարող կողմը պարտավոր է ողջամիտ ժամկետում մյուս կողմին կապի, ներառյալ ինտերնետի միջոցով գրավոր տեղյակ պահել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության և պարտավորությունները չկատարելու մասին: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայության մասին ողջամիտ ժամկետում չտեղեկացնելը նման պարտավորություն կրող կողմին զրկում է վկայակոչել անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) առկայությունը որպես պատասխանատվությունից ազատելու հիմք:

8.4 Բանկի պատասխանատվությունը.

8.4.1 Քարտապանի անունով մուտք եղած դրամական միջոցները Հաշվին ժամանակին չմուտքագրելու կամ դրանք Հաշվից անհիմն դուրս գրելու, ինչպես նաև դրամական միջոցները փոխանցելու կամ դրանք վճարելու մասին Քարտապանի ցուցումները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքերում Բանկը պատասխանատվություն է կրում օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով, բացառությամբ սույն Կանոններով նախատեսված դեպքերի:

8.4.2 Բանկը պատասխանատվություն չի կրում դրամական միջոցների փոխանցումներ կատարելու Քարտապանի հանձնարարականները ժամանակին չկատարելու այնպիսի դեպքերում, եթե դրանք չեն կատարվել Բանկի թղթակից բանկերի, ներառյալ Կենտրոնական բանկի կամ երրորդ անձանց գործողությունների և(կամ) անգործության հետևանքով:

8.4.3 Բանկը պատասխանատվություն չի կրում իր պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, եթե դա հետևանք է Քարտապանի ներկայացրած դրամական միջոցների փոխանցման վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերում ոչ բավարար (ոչ ճիշտ) տեղեկությունների, և(կամ) որը հնարավորություն չի տվել հստակ որոշելու դրամական միջոցներ ստացողին և(կամ) վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերը չեն համապատասխանել օրենսդրությամբ և(կամ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին:

8.4.4 Բանկը պատասխանատվություն չի կրում Կենտրոնական բանկի կամ Պայմանագրով սահմանված (նախատեսված) պահանջների խախտմամբ կազմված վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերի հիման վրա և(կամ) օրենսդրությամբ կամ սույն Կանոններով նախատեսված ժամկետների խախտմամբ ներկայացված փաստաթղթերի հիման վրա Հաշվով գործառնությունների կատարումը մերժելու համար:

8.4.5 Բանկը պատասխանատվություն չի կրում Քարտապանի կրած այն վնասների և հետևանքների համար, որոնք ծագել են Հաշվով գործառնություններ իրականացնելու լիազորություններ չունեցող անձանց ստորագրություններով Հաշվից դրամական միջոցների փոխանցելու կամ կանխիկ դրամական միջոցներ տալու կարգադրությունները կատարելու հետևանքով, կեղծված կամ զեղծարարված ստորագրություններ և (կամ) կնիքի դրոշման պարունակող դրամական չեկերով վճարելու և(կամ) այլ փաստաթղթերով Քարտապանի կարգադրությունները կատարելու հետևանքով, ինչպես նաև կեղծ կատարողական և(կամ) այլ փաստաթղթերի, այդ թվում օրենսդրությանը համապատասխան առանց Քարտապանի լրացուցիչ համաձայնության Հաշվից դրամական միջոցներ դուրս գրելու և(կամ) փոխանցելու հետևանքով, եթե օրենսդրությամբ, բանկային կանոններով և սույն Կանոններով նախատեսված ընթացակարգերին համապատասխան Բանկը չի կարողացել պարզել կարգադրությունը լիազորված անձանց կողմից չտալու, ստորագրությունների կամ կնիքի դրոշմի կամ կատարողական փաստաթղթերը կեղծված լինելու հանգամանքները:

8.4.6 Բանկը պատասխանատվություն չի կրում իր վերահսկողության շրջանակներից դուրս տեղի ունեցած կոնֆլիկտային իրավիճակների համար, որոնք կապված են այլ բանկերի սպասարկման կետերի կողմից Քարտը սպասարկման չընդունելու, իրեն կամ այլ բանկերին պատկանող ծրագրա-տեխնիկական սարքերի անսարքության (Բանկոմատներ և տերմինալներ), ինչպես նաև Քաղվածքների ավտոմատացված ուղարկման դեպքում ծրագրային խափանումների հետևանքով Քաղվածքների չստացման համար:

8.4.7 Բանկը պատասխանատվություն չի կրում բոլոր այն դեպքերի համար, երբ Քարտով կատարված գործարքի վերաբերյալ Քարտապանին կարճ հաղորդագրության (էս էմ էս) միջոցով Բանկի անհապաղ

տեղեկացումից հետո Քարտապանի կողմից չի ձեռնարկվել սույն Կանոններով սահմանված կանխարգելիչ միջոցառումներ և անհապաղ չի հայտնել Բանկին գործարքն իր կողմից կատարելու կամ չկատարելու մասին:

8.4.8 Բանկը պատասխանատվություն է կրում կորցրած Քարտի ոչ օրինական օգտագործման համար միայն կորստի վերաբերյալ ծանուցում ստանալու և միայն դրանից հետո հավաստագրված գործարքների համար:

8.4.9 Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Կանոնների խախտումով կատարված գործարքների, ինչպես նաև Քարտի, այդ թվում Կցված քարտի, Պին-կոդի /PIN/, Բանկային գաղտնաբառի, Քարտի վրա նշված տեղեկատվության (Վճարային քարտի համար, CVV/CVC կոդ, վավերության ժամկետ) օգտագործման, երրորդ անձանց տրամադրման կամ հայտնի դառնալու հետևանքով Քարտապանի կրած վնասների համար:

8.4.10 Քարտի կորստի, գողության, հափշտակության, մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման, զեղծարարության (կամ կասկածի) մասին Բանկին տեղեկացնելուց հետո Քարտով, այդ թվում Կցված քարտով, իրականացված՝ հավաստագրում չպահանջող գործարքների, այդ թվում՝ ինտերնետ միջավայրում կատարված գործարքների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

8.4.11 Քարտի կորստի, գողության, հափշտակության, մեկ այլ անձի կողմից անօրինական օգտագործման, զեղծարարության (կամ կասկածի) դեպքում խորհուրդ է տրվում վերաթողարկել քարտը: Եթե Քարտապանը ցանկանում է շարունակել օգտագործել նման քարտը, ապա պետք է Բանկ ներկայացնի Քարտի ապաբլոկավորման դիմում: Այս դեպքում Քարտի օգտագործման հետ կապված հնարավոր կորուստների և վնասների համար պատասխանատվությունը կրում է Քարտապանը:

8.4.12 Բանկը պատասխանատվություն չի կրում այլ բանկերի բանկոմատների միջոցով կանխիկացման գործառնությունների համար գանձված լրացուցիչ միջնորդավճարների համար:

8.4.13 Բանկը որևէ պատասխանատվություն (գույքային, ֆինանսական և այլն) չի կրում Քարտապանի առջև՝ երրորդ անձանց կողմից կեղծված կամ զեղծարարությամբ Քարտապանին տրամադրված Քարտի օգտագործմամբ իրականացված գործարքների հետևանքով Քարտապանին պատճառած վնասների համար, և այդ եղանակով Քարտապանին պատճառված վնասները Բանկի կողմից չեն հատուցվում:

8.4.14 Բանկը պատասխանատվություն չի կրում իր այն պարտավորությունների չկատարման կամ անպատշաճ կատարման համար, որոնք առաջացել են Բանկի հսկողության տակ չգտնվող տեխնիկական, էլեկտրասնուցման և/կամ կապի միջոցների խափանման կամ այլ հանգամանքների հետևանքով:

8.5 Քարտապանի պատասխանատվությունը.

8.5.1 Քարտապանը պատասխանատվություն է կրում օրենսդրությանը համապատասխան Հաշվով գործառնություններ իրականացնելու համար, ինչպես նաև Հաշվի բացման և Հաշվով գործառնություններ իրականացնելու համար հիմք հանդիսացող և Բանկ ներկայացվող փաստաթղթերի ձևակերպման և արժանահավատության համար:

8.5.2 Քարտապանը պատասխանատվություն է կրում Հաշվի բացման և Հաշվով գործառնություններ իրականացնելու համար Բանկին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու լիազորություններ ունեցող անձանց գործողությունների համար:

8.5.3 Քարտապանը պատասխանատվություն է կրում Հաշվին սխալմամբ կամ կրկնակի փոխանցված դրամական միջոցները (ոսկին) Բանկին վերադարձնելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Եթե Քարտապանը սույն Կանոններով նախատեսված ժամկետներում Բանկին չի վերադարձնում Հաշվին սխալմամբ կամ կրկնակի փոխանցված դրամական միջոցները, ապա այդ դրամական միջոցներին վճարվում օգտագործման արդյունքում առաջացած գերածախսի վրա հաշվարկվում են տոկոսներ՝ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, յուրաքանչյուր ուշացված օրվա համար:

8.5.4 Քարտապանը պատասխանատվություն է կրում իր հետ կապի համար Բանկին ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ (Քարտապանի հեռախոսի և(կամ) ֆաքսի համարներ, էլեկտրոնային փոստի հասցե, փոստային թղթակցության ուղարկման փոստային հասցե, այլ տեղեկություններ) ներկայացնելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար, ինչպես նաև ժամանակին թարմացված տեղեկություններ ներկայացնելու համար:

8.5.5 Քարտապանը պատասխանատվություն է կրում և բոլոր անբարենպաստ հետևանքները վերցնում է իր վրա Հաշվին ինկասո հանձնարարության հիման վրա դրամական միջոցներ ստացողին հաստատելու մասին Բանկի հարցումներին ժամանակին պատասխանելու պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու և (կամ) հարցումների անարժանահավատ պատասխաններ ներկայացնելու համար:

<u>ԲԱԺԻՆ 9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ</u>

9.1 Բոլոր վեճերը, որոնք ծագում են Հաշվի պայմանագրի կատարման ընթացքում, Կողմերի կողմից լուծվում են բանակցությունների միջոցով՝ երկկողմանի ընդունելի որոշումներ կայացնելու համար:

9.2 Բանակցություններն անարդյունք գրանցվելու կամ փոխադարձ ընդունելի որոշումներ չկայացվելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Քարտապանը հնարավորություն ունի Հաշվի պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված Պայմանագրի համաձայն, Բանկը հրաժարվում է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250.000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500.000,00 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

9.3 Կողմերը պայմանավորվում են, որ՝

ա) Հաշվի պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինեն Կողմերի լիազորված անձանց կողմից, և պետք է ուղարկվեն Կողմերին հայտնի վերջին ծանուցման հասցեներով.

բ) Հաշվի պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական ծանուցում, այդ թվում՝ դատավարական փաստաթուղթ, ուղարկվում են Կողմերին հայտնի վերջին ծանուցման հասցեներով:

Սույն կետում նշված գրավոր փաստաթղթերը համարվում են հասցեատիրոջ կողմից պատշաճ ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում (չի բնակվում), եթե սույն Կանոնների 12.4 կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց ծանուցման հասցեները (գտնվելու վայրերը) փոխելու մասին:

ԲԱԺԻՆ 10. ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10.1 Սույն Կանոններում փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ Կանոնները հաստատվում (կատարվում) են Բանկի նախաձեռնությամբ՝ սույն բաժնով նախատեսված կարգով:

10.2 Բանկը տեղեկացնում է Քարտապանին սույն Կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ Կանոնները հաստատելու մասին ոչ ուշ, քան դրանք ուժի մեջ մտնելուց 5(հինգ) օր առաջ՝ սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցներից մեկով:

10.3 Սույն Կանոնների փոփոխություններն ու լրացումները, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները ուժի մեջ են մտնում սույն Կանոնների 10.2 կետում նշված ժամկետի ավարտմանը հաջորդող օրվանից:

10.4 Սույն Կանոնների ցանկացած փոփոխություն և լրացում, այդ թվում՝ նոր խմբագրությամբ հաստատված Կանոնները ուժի մեջ մտնելուց հետո հավասարապես տարածվում են այն բոլոր անձանց վրա, ովքեր միացել են սույն Կանոններին, այդ թվում՝ մինչև ուժի մեջ մտնելը սույն Կանոններին միացած անձանց վրա:

10.5 Եթե Քարտապանը համաձայն չէ սույն Կանոններում կատարված փոփոխություններին և լրացումներին, այդ թվում նոր խմբագրությամբ հաստատված Կանոններին, ապա իրավունք ունի լուծել Հաշվի պայմանագիրը սույն Կանոնների 11.2 կետով նախատեսված կարգով:

ԲԱԺԻՆ 11. ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ: ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀՐԱԺԱՐՈՒՄ: ՀԱՇՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

11.1 Հաշվի պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է անորոշ ժամանակով:

11.2 Քարտապանն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծել Հաշվի պայմանագիրը: Հաշվի պայմանագրի լուծման համար Քարտապանը պարտավոր է Բանկին ներկայացնել Հաշվի պայմանագիրը լուծելու վերաբերյալ դիմում՝ Բանկի կողմից սահմանված ձևով, Բանկին հանձնել չօգտագործված դրամարկղային չեկային գրքույկը՝ չօգտագործված դրամական չեկերով, Քարտը և կարգավորել Հաշվի պայմանագրով Բանկի հետ փոխադարձ հաշվարկների կատարումը:

Բանկին Հաճախորդի կողմից իր անձնական տվյալները մշակելու համաձայնությունը հետ կանչելու կամ դադարեցնելու պահանջ ներկայացնելու դեպքում ևս դիտարկվում է որպես Հաշվի պայմանագիրը լուծելու պահանջ և կիրառվում են նախորդ պարբերությունում նկարագրված Հաշվի պայմանագիրը լուծելու համար նախատեսված ընթացակարգը:

Հաշվի փակման դիմումի հիման վրա լուծվում է միայն տվյալ Հաշվի վերաբերյալ կնքված Հաշվի պայմանագիրը, իսկ սույն կետի 2-րդ պարբերությունում նշված դեպքում լուծվում են բոլոր տեսակի բանկային հաշվի վերաբերյալ կնքված Հաշվի պայմանագիրը:

Քարտային հաշվի փակման դիմում ներկայացնելու դեպքում Քարտապանի կողմից Քարտը վերադարձնելիս Բանկը պարտավոր է Քարտապանին տրամադրել Քարտը վերադարձնելու մասին գրավոր հավաստում:

Քարտապանի կողմից Քարտը չվերադարձնելու դեպքում Քարտային հաշվի փակման դիմումում Քարտապանը պարտավոր է իր ստորագրությամբ այդ մասին նշում կատարել: Ընդ որում, Քարտային հաշվի փակման դիմում ներկայացնելուց և Քարտային հաշվի փակումից հետո տեղի ունեցած խարդախության/զեղծարարության տեղի ունենալու դեպքում, բացառությամբ նախքան Քարտային հաշվի փակման դիմումը ներկայացնելը Քարտապանի կողմից կատարված, սակայն Հաշվի փակման դիմումը ներկայացնելուց հետո ձևակերպում ստացած գործարքների, խարդախության/զեղծարարության ռիսկը կրում է Բանկը, եթե Քարտապանը վերադարձրել է Քարտը, իսկ Քարտապանի կողմից Քարտը չվերադարձնելու դեպքում խարդախության/զեղծարարության ռիսկը չի կարող կրել բացառապես Բանկը:

11.3 Բանկի կողմից Հաշվի փակման վերաբերյալ դիմումի ընդունումը հաստատվում է դրա վրա Բանկի կողմից համապատասխան նշում կատարելու փաստով:

11.4 Հաշվի պայմանագիրը համարվում է լուծված սույն Կանոնների 11.2 կետում նշված Քարտապանի դիմումը ստանալու պահից: Դրամական միջոցները, որոնք գտնվում են Հաշվում և մնացել են Բանկի հանդեպ Քարտապանի ունեցած պարտքը մարելուց հետո, Բանկի կողմից տրամադրվում է Քարտապանին կանխիկ եղանակով (սույն կարգը գործում է միայն անհատ ձեռնարկատերերի և ֆիզիկական անձանց մասով) կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշվի:

11.5 Բանկի պահանջով Հաշվի պայմանագիրը կարող է լուծվել օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

Բանկն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել Հաշվի նկատմամբ սույն Կանոնները կատարելուց, եթե մեկ տարվա ընթացքում Հաշվով գործառնություններ չեն կատարվել կամ երբ Քարտապանի Հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պակաս է Սակագներով նախատեսված նվազագույն չափից, եթե նման գումարը չի վերականգնվել այդ մասին Բանկի զգուշացման օրվանից 1(մեկ) ամսվա ընթացքում: Հաշվի պայմանագիրը համարվում է լուծված վերոհիշյալների վերաբերյալ Բանկի գրավոր զգուշացման օրվանից 1(մեկ) ամիսն անցնելուց հետո, եթե այդ ժամկետի ընթացքում Հաշվով գործառնություններ չեն կատարվել կամ Քարտապանի Հաշվում պահվող դրամական միջոցների գումարը չի համալրվել առնվազն Սակագներով նախատեսված նվազագույն չափով:

11.6 Հաշվի պայմանագրի լուծումը հիմք է Քարտապանի Հաշիվը փակելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ միաժամանակյա առկա են Հաշվում դրամական միջոցներ(ոսկի) և պետական ու այլ իրավասու մարմինների որոշումներ Հաշվով գործառնությունները կասեցնելու(բլոկավորելու) կամ Հաշվում առկա դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին: Նշված դեպքերում Հաշիվը փակվում է վերոհիշյալ որոշումները վերացնելու մասին Բանկի կողմից ծանուցումներ ստանալուց հետո:

ԲԱԺԻՆ 12. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

12.1 Կողմերի լրացուցիչ համաձայնագրերով (պայմանագրերով) կարող են կարգավորվել Բանկի և(կամ) երրորդ անձանց կողմից Քարտապանի դրամական միջոցների ինկասացման ու դրանք Քարտապանին հանձնելու, Հաշվում գտնվող դրամական միջոցների մնացորդի դիմաց տոկոսների հաշվարկման (կուտակման), էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի (հեռահաղորդակցության համընդհանուր օգտագործման ուղիների) օգտագործման միջոցով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, այդ թվում՝ էլեկտրոնային ստորագրությունների, ծածկագրերի, նշանաբանների, այլ միջոցների նմանօրինակների և(կամ) տեղեկությունների պաշտպանության այլ միջոցների, Քարտապանին սպասարկելու հետ կապված իրավահարաբերությունները:

12.2 Քարտապանը տալիս է իր համաձայնությունն (թույլտվությունը) առ այն, որպեսզի Բանկը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրի (հրապարակի) Բանկի ղեկավարներին և այլ աշխատողներին՝ նրանց աշխատանքային պարտականություններին համապատասխան, ինչպես նաև Հաշվի պայմանագրով նախատեսված Բանկի իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման նպատակով Բանկի կողմից ներգրավված երրորդ անձանց, ինչպես նաև օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով Բանկի վրա դրված պարտականությունները կատարելու նպատակով:

12.3 Հաշվի պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող Քարտապանի ցանկացած պահանջ, ծանուցում, դիմում կամ այլ հաղորդում ուղարկվում է Բանկի Սպասարկող ստորաբաժանման www.amiobank.am ինտերնետային կայքէջում նշված վավերապայմաններով կամ այլ վավերապայմաններով, իսկ Բանկի ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում Քարտապանին տեղեկացվում է սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցներից որևէ մեկով:

Քարտապանի պահանջը, ծանուցումը, դիմումը կամ այլ հաղորդումը Բանկին ներկայացվում է գրավոր փաստաթղթի ձևով, որը պետք է ստորագրված լինի վերջինիս ստորագրությունների նմուշի և կնիքի դրոշմի քարտում նշված լիազորված անձի կողմից և/կամ դրոշմված լինի Քարտապանի կնիքով (Քարտապանի ցանկությամբ):

Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքված լինելու դեպքում Քարտապանն իրավունք ունի Բանկին ներկայացնել պահանջ, ծանուցում, դիմում, հաղորդում կամ այլ փաստաթուղթ՝ էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի միջոցով, Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագրով նախատեսված կարգով: Այն դեպքերում, երբ սույն Կանոններով նախատեսված է, որ որևէ փաստաթուղթ Քարտապանի կողմից պետք է կազմվի Բանկի հաստատած օրինակելի ձևով, ապա այդպիսի փաստաթուղթը Քարտապանը պետք է ներկայացնի Բանկ Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի միջոցով միայն այն դեպքում, եթե համապատասխան փաստաթուղթը օրինակելի ձևով կազմելու հնարավորությունն ապահովված է Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի կարգավորումներով:

Հաշվի պայմանագրով նախատեսված Բանկի բոլոր ծանուցումները, որոնք վերաբերում են անսահմանափակ անձանց սպասարկելու հետ կապված հարցերին, Բանկի կողմից ուղարկվում են Քարտապանին սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցների կամ դրանցից մեկի օգտագործմամբ, իսկ այն ծանուցումները, որոնք կապված են Քարտապանի սպասարկման հետ, ուղարկվում են Էլեկտրոնային բանկային սպասարկման համակարգի օգտագործմամբ (Կողմերի միջև Էլեկտրոնային բանկային սպասարկման պայմանագիր կնքվելու դեպքում) կամ այդպիսի ծանուցումները հանձնվում (ուղարկվում) են Քարտապանին ցրիչի կամ «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքով սահմանված փոստային առաքման միջոցով՝ Բանկին Քարտապանի կողմից ներկայացված միանալու մասին դիմումում կամ սույն Կանոններին համապատասխան այլ փաստաթղթում նշված փոստային վավերապայմաններով կամ Բանկին հայտնի Քարտապանի վերջին փոստային հասցեով:

Սույն Կանոններում նշված գրավոր փաստաթղթերը (ծանուցումներ, պահանջներ, հաղորդումներ, գրավոր թղթակցություն և այլն) հասցեատերերի կողմից համարվում են ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերը այդ հասցեում այլևս չի գտնվում (չի բնակվում), եթե սույն Կանոնների 12.4 կետին համապատասխան Կողմերը միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային/ծանուցման հասցեները (գտնվելու/բնակվելու/հաշվառման վայրերը) փոխելու մասին:

Կողմերը եկան համաձայնության այն մասին, որ արտարժութային գործառնությունների կատարման, հաշվառման և հսկողության հետ կապված փաստաթղթերի և տեղեկությունների փոխանակման կարգը և եղանակները որոշվում են Բանկի կողմից միակողմանիորեն և Քարտապանին տեղեկացվում է սույն Կանոնների 2.16 կետում նշված միջոցներով կամ դրանցից որևէ մեկով:

12.4 Կողմերը 3(երեք) աշխատանքային օրվա ընթացքում պետք է միմյանց տեղեկացնեն իրենց փոստային հասցեների (գտնվելու/բնակվելու/հաշվառման վայրերի) փոփոխությունների մասին, հակառակ դեպքում սույն Կանոններից կամ Հաշվի պայմանագրից բխող գրավոր թղթակցություններն իրականացվում են Կողմին հայտնի մյուս Կողմի վերջին հասցեով: Փոփոխությունների մասին մյուս կողմ(եր)ին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող անձը:

12.5 Հաշվի պայմանագրից ծագած Քարտապանի պարտավորությունները, առանց Բանկի գրավոր անվերապահ համաձայնության, նրա հայտարարությամբ չեն կարող լրիվ կամ մասնակի դադարել Բանկի նկատմամբ Քարտապանի հանդիպակաց պահանջի հաշվանցով:

12.6 Եթե օրենսդրության մեջ և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերում կատարվել են փոփոխություններ, որոնք ազդում են Հաշվի պայմանագրի պայմանների վրա, ապա Հաշվի պայմանագիրը գործում է այն մասով, որը չի հակասում օրենսդրությանը և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին:

Հաշիվը բացելիս Բանկը ֆիզիկական անձ և անհատ ձեռնարկատեր հանդիսացող Քարտապանին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

Հաշիվը բացելիս Բանկը Քարտապանին հանձնում է նաև «ինչ անել, եթե բողոք ունեք» ձևաթուղթը:

12.7 Այն դեպքում, երբ ավարտվել է Քարտի գործողության ժամկետը և այդ ժամկետը լրանալուց հետո Քարտապանը որևէ դիմում չի ներկայացրել այն վերաթողարկելու համար, ապա Հաշվի սպասարկման ռեժիմը փոփոխվում է բանկային հաշվի ռեժիմի և այդ հաշվի վրա տարածվում են Բանկի հրապարակած բանկային հաշիվների բացման և սպասարկման գործող խմբագրությամբ հիմնական (ընդհանուր) կանոնները:

12.8 Հավելվածները հանդիսանում են սույն Կանոնների անբաժանելի մաս(եր)ը: